

ՍՈՒՐԻՎ ՄԱՍՆԱԿՅԵՃՄԱՒ ՏԱՌԻԶԱՅԻ ՄԵՋ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԿԵՆՍՈՒԹԻ ԽՈՐՀՐԱԺՈՂՈՎԻՆ

Սուրիոյ մասնակցութեամբ, Քաթարի մայրաքաղաք Տաուհայի մէջ ընթացք առաւ OPEC-ի արաբական երկիրներու կենսուժի առնչուող 12-րդ խորհրդաժողովը՝ «Կենսուժ եւ Արաբական Գործակցութիւն» խորագիրով:

Երկօրեայ խորհրդաժողովին մասնակցած սուրիական պատուիրակութեան նախագահ, Սուրիոյ քարիւղի եւ հանքային հարստութեան նախարար դրկտ. Ֆիրաս Քատտուր իր խօսքին մէջ ըսաւ, որ կենսուժը երկրի մը



տնտեսական եւ ընկերային բարգաւաճման հիմնաքարն է: Ան շեշտեց, որ Սուրիոյ մէջ քարիւղի արտադրութեան կտրուկ նուազումը, որուն հետեւանքով ալ ելեկտրականութեան հոսքին սակաւութիւնը երկրի աշխատանքային կարելիութիւնները սահմանափակեցին ու դժուար դարձուցին ժողովուրդին եւ տնտեսական ու ծառայողական հաստատեցներուն ելեկտրական սպառման համապատասխան կարիքին ապահովումը:

Նախարար Քատտուր աւելցուց. «Սուրիոյ մէջ հրահրուած պատերազմէն 12 տարի ետք, սուրիացի քաղաքացիին կեանքը եւ ապրուստը աղիտալի մակարդակներու հասան, այնպէս ինչպէս երկրին տնտեսութիւնը, հետեւաբար անհրաժեշտ կարիք կայ կենսուժի հատուածը զարգացնելու, քայլ պահելու կենսուժի օգտագործման միջոցներու համաշխարհային զարգացման հետ եւ վերանորոգուող կենսուժի ծրագիրները բազմացնելու, այսպիսով կրնանք ապահովել սուրիական ընկերութեան կարիքները եւ առաջին քայլը առնել Սուրիոյ վերականգնումի աշխատանքներուն ուղղութեամբ:

«Սուրիան, հակառակ բոլոր մարտահրաւերներուն, բազում քայլեր առաւ այլընտրանքային կենսուժի ոլորտին մէջ եւ նոր օրէնքներ հրապարակեց՝ աջակցելու վերանորոգուող կենսուժի ոլորտին մէջ ներդրումներ կատարողներուն»:

ԻՐԱՆ ԿՊՂՉՈՒՆԷ ԵՐԵՒԱՆԻ ԵՒ ՊԱՔՈՒԻ ԿԱԼԱՆԱԽՐՆԵՐՈՒ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՄԱՆ ԱՌԵՉՈՒՈՂ ՄԻԱՅԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Իրանի Արտաքին Գործոց Նախարարութեան բանբեր Նասեր Քենասաւի 11 Դեկտեմբերին մամլոյ ասուլիսի ընթացքին յայտարարեց, որ Թեհրան կ'ողջունէ Երեւանի եւ Պաքուի կալանաւորներու ազատ արձակման առընչուող միացեալ յայտարարութիւնը:

Իրանցի պաշտօնատարին համաձայն, Հայաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարներու աշխատակազմերուն միջեւ գոյացած համաձայնութիւնը «դրական իրադարձութիւն» է:

«Կայուն խաղաղութեան հասնելու համար անհրաժեշտ է ամրապնդել շրջանի երկիրներուն միջեւ խաղաղութեան լեզուն եւ վստահութեան մթնոլորտը: Մենք յոյսով ենք, որ այդ քայլերուն շնորհիւ կողմերը պիտի յաջողին հասնիլ խաղաղութեան եւ կայունութեան:

«Իրանի Իսլամական Հանրապետութիւնը պատրաստ է օգնելու երկու կողմերուն հասնելու շրջանային խաղաղութեան եւ անվտանգութեան», յայտնեց Իրանի Արտաքին Գործոց Նախարարութեան բանբերը:



ՀԱՆՊԱՆԱՅՈՒԹԻՒՆԸ ՀԱՄԱԽՈՒՄԸ ԸՆԴՔԵՐՈՎ ՅԻՇՏԱԿԵՅ ՀՅԳ 133-ԱՄԵՆԱԿԸ

Տիգրան Ճինպաշեան. «Անհրաժեշտութիւն կայ ընդդիմադիր ու ազգային ուժերը միաւորելու եւ ազգային փրկութեան ճակատ մը ստեղծելու»:

Դաշնակցութեան օրը այս տարի կը յիշատակենք Արցախի կորուստին ցաւը ապրելով, արցախահայութեան իրաւունքներու պաշտպանութեան մարտահրաւերին դէմ յանդիման կանգնելով:

ՀՅԳ 133-ամեակի հանդիսութիւնը տեղի ունեցաւ Երեկ՝ Կիրակի, 10 Դեկտեմբերին, արցախահայութեան ինքնորոշման օրը, անկախութեան հանրաքուէին օրը, որ իրականացած էր 10 Դեկտեմբեր 1991-ին: Այսօր բռնի խլուած է պատմական Արցախը ու բոլորովին անտեսուած արցախահայութեան ինքնորոշման միջազգային իրաւունքը:



Այս ծանր իրողութեան ընդառաջ հայեպահայեր հաւաքուած էին լսելու Դաշնակցութեան խօսքը:

Հանդիսութեան հրահրեալները դիմաւորուեցան ՀՍԸՄ-ի փողերախումբին հնչեցուցած ազգային-յեղափոխական երգերով, «Գ. Եսայեան» սրահին մուտքին:

Հայ Երիտասարդաց Միութեան կազմակերպութեամբ տեղի ունեցած հանդիսութեան ներկայ էին հայ երեք համայնքապետները, Սուրիոյ խորհրդարանի եւ Ազգային երեսփոխաններ, հալեպահայ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, Հայ Բարեգործական Ընդհ. Միութեան ներկայացուցիչը, ՀՍԸՄ-ի եւ ՀՕՄ-ի Կեդր. Վարչութեան, հալեպահայ մշակութային, բարեսիրական, մարզական, երիտասարդական միութիւններու ներկայացուցիչներ, Գամիշլիի Առաջնորդական փոխանորդ Հոգ. Հայր Լեւոն Վրդ. Եղիայեան, հոգեւոր հայրեր, Դաշնակցութեան համակիրներ եւ մեծաթիւ հայորդիներ, ինչպէս նաեւ այս առիթով Հալեպ ժամանած լիբանանահայ գործիչ Տիգրան Ճինպաշեան:

Զեռնարկի կարգախօսն էր «Կամքի կորովով, բազուկի ուժով»:

Բացման հայերէն խօսքով Փաթիլ Գասապեան-Վարդապետեան շեշտեց, որ Դաշնակցութիւնը տկարութիւն չի ճանչնար ու պիտի շարունակէ իր ողջ կարելիութիւններով նեցուկ կանգնիլ հայ ժողովուրդին, Հայաստանին ու արցախահայութեան, պարտութիւնները յաղթահարելու եւ մեր ժողովուրդի իրաւունքներուն տիրութիւն ընելու ռազմավարական սոր մօտեցումներով, անվհատ ու միասնական ջանքերով:

Արաբերէն բացման խօսքով Արա Մուրաֆեան վեր առաւ հայրենիքին ու ազգային մշակոյթին արժեքը, շեշտելով որ ազգերը կորուստի կը մատնուին առանց մշակոյթի, առանց հողի, հետեւաբար ալ սերունդներուն մէջ հարկ է միշտ վառ պահել հայրենիքի ու ազգային մեր ժառանգութեան պահպանման ու անոնցմով իսկ զարգացնալու եւ ամրանալու տենչը:

Գեղարուեստական յայտագիրով նախ հանդէս եկաւ Համազգայինի «Չուարթնոց» երգչախումբը, խմբավարութեամբ Գայիանէ Սիմոնեան-Տերեանի, դաշնամուրի ընկերակցութեամբ Լիզէթ Սերայտարեան-Աւընեանի: Երգչախումբը մեկնաբանեց «Արցախին», «Մեզ Միացնողը Դաշնակցութիւնն է», «Դարձիր Իմ Անի», «Հայ Չիւտոր» եւ «Դեպի Սասուն» երգերը:

Այնուհետեւ ցուցադրուեցաւ տեսերիզ մը, ուր կը ներկայացուէին Արցախեան ազատագրական պայքարին մէջ Դաշնակցական ազատամարտիկներուն մարտերը, արցախեան ազատամարտին մէջ հայութեան միասնական պայքարը, ազատագրման օրերը, նահատակներուն պատկեր-

Թղթակից
Շար.՝ էջ 12 >

Խմբագրական

ԱՏՐՊԷՅՃԱՆ ԿԸ ԶԱՆԱՅ ՏԻՄՆՈՎԻՆ ԶՆՋԵԼ ԱՐՑԱԽԻ ՆԱՅԿԱԿԱՆ ԴԻՄԱԳԻԾԸ

Ատրպեյճան որքան ալ փորձէ կաշառել ՄԱԿ-ն ու միջազգային այլ կազմակերպութիւններ Արցախի սեփականատերը ըլլալու իր ստապատիր քարոզարշաւով, քաջ գիտէ որ Արցախը հայկական է, հետեւաբար ալ ամէն ջանք ի գործ կը դնէ առանց ժամանակ կորսնցնելու հիմնովին ջնջելու կամ աղաւաղելու Արցախի հայկական դիմագիծը, չբաւարարուելով արցախահայութեան բռնի տեղահանմամբ:

Հայքի Մշակութային Պաշտպանութեան կազմակերպութեան տուեալներով, Ատրպեյճան բռնագրաւուած Արցախի տարբեր շրջաններու մէջ ոչ միայն կ'ոչնչացնէ յուշարձաններ, այլեւ կը խեղաթիւրէ Արցախի բնակավայրերու ինքնութիւնը՝ ջնջելով հայկական հետքերը, քանդելով յուշարձաններն ու աղաւաղելով հայկական եկեղեցիները: Օրինակներ բերելով Արցախի Հանրապետութեան Մետրոպ Մաշտոց համալսարանի կովկասագիտութեան դեկանար, ատրպեյճանագետ Յովիկ Աւանետով փաստերով կը պարզէ Շուշիի գերեզմանատան տարածքին մէջէն ճամբայ բաւալու Ատրպեյճանի շինարարական աշխատանքը, Հադրութի հին, այդ կարգին պատմական, շէնքերը քանդելու ծրագիրը, հայկական յուշարձանները, խաչքարերը քանդելու, ինչպէս նաեւ հայկական եկեղեցիները որպէս աղուանական ներկայացնելու Ատրպեյճանի լարուած ճիգերն ու յստակ նպատակը:

Արդարեւ, Արցախի բնիկ ժողովուրդը ցեղասպանութեան ենթարկելէ ու բռնի տեղահանելէ ետք, Ատրպեյճան այս անգամ խաղաղասիրութեան քօղին տակ մշակութային ցեղասպանութեան լծուած է՝ այսպիսով հերքելով իր իսկ պնդումները, թէ հայերը Արցախի հետ պատմական որեւէ առնչութիւն չունին, կամ քաղաքակրթական արժէք չեն ստեղծած այնտեղ:

Ատրպեյճանի այս յանցագործութիւնը ընթացք առած էր 2020-ի պատերազմի աւարտին, 9 Նոյեմբերի համաձայնութեան յաջորդող օրերէն իսկ:

5 Ապրիլ 2021-ին, Հայաստանի Հանրապետութեան Արտաքին Գործոց Նախարարութենէն ներս տեղի ունեցած էր Հայաստանի՝ ԻԼՆԵՍԵՕ-ի ազգային յանձնաժողովի նիստը, որուն օրակարգի առանցքային նիւթերէն մէկը եղած էր Արցախի՝ ատրպեյճանական վերահսկողութեան տակ յայտնուած տարածքներուն մէջ հայկական պատմամշակութային եւ կրօնական ժառանգութեան պատշաճ եւ երաշխաւորուած պաշտպանութեան, անոնց նկատմամբ վանդալութեան դէպքերու կանխումբին հարցը:

Հայկական կողմը այդ օրերէն ԻԼՆԵՍԵՕ-ի ուշադրութեան կը յանձնէր, որ Ատրպեյճանի ռազմական վերահսկողութեան տակ անցած Արցախի տարածքներուն մէջ գտնուող հազարաւոր պատմամշակութային եւ կրօնական յուշարձաններ յայտնուած են ոչնչացման վտանգի տակ: Յուշարձաններ, որոնք տարածաշրջանի մէջ հայ ժողովուրդի դարաւոր պատմութեան իրեղէն ապացոյցն են ու մեծ արժէք կը ներկայացնեն ոչ միայն հայկական, այլեւ համաշխարհային մշակութային ժառանգութեան համար:

Հայաստան օրին ԻԼՆԵՍԵՕ-ի կողմէն Արցախ առաքելութեան գործուղման առաջարկ անգամ ներկայացուցած էր:

Բայց... ձայն բարբարոյ յանապատի:

ԻԼՆԵՍԵՕ-ն, այսպէս կոչուած՝ ՄԱԿ-ի կրթական, գիտական եւ մշակութային կազմակերպութիւնը, ոչ միայն չկրցաւ առաջը առնել մշակութային արժէքներու քանդումի յանցագործութեան, այլեւ յանցագործութեան իրականացման իսկ ընթացքին 22 Նոյեմբեր 2023-ին, Փարիզի մէջ ընթացած ԻԼՆԵՍԵՕ-ի ընդհ. ժողովի 42-րդ նստաշրջանի փոխնախագահ ընտրեց Հայաստանի կողքին նաեւ Ատրպեյճանը՝ իր իսկ սկզբունքները ոտնահարելով:

Այս բոլորին լոյսին տակ, հայկական կողմը, իր պետական թէ սփիւռքեան լծակներով, լուսարձակի տակ պետք է պահէ Արցախի հայկական հետքը ոչնչացնելու Ատրպեյճանի քաղաքակրթութիւնը, յատկապէս նկատի ունենալով որ մշակութային այդ հարստութիւնը ոչ միայն հայկական, այլեւ համաշխարհային արժէք ներկայացնող ժառանգութիւն է:

«Գ.»

- 12 տարուան դադրեցումէն ետք, Ռիատի մէջ սուրիական դեսպանատունը պիտի սկսի գործել Կիրակի, 17 Դեկտեմբեր 2023-ին:

Դեսպանատունը իր պատրաստակամութիւնը յայտնեց քաղաքացիներուն համապատասխան ծառայութիւններ մատուցելու՝ աշխատանքային արագ կշռոյթով:



Յիշեցնենք, որ 2012-էն ի վեր Ռիատի մէջ սուրիական դեսպանատան աշխատանքները ամբողջովին դադրած էին:

-Հետեւելով համաշխարհային թուայնացման միջոցներուն, Սուրիոյ Կրթութեան Նախարարութիւնը յայտարարեց, որ 2023-2024 ուսումնական տարեշրջանի երկրորդականի «պաքալորիա»-ի պետական քննութիւններուն հարցարանները թուայնացուած տարբերակով պիտի պատրաստուին, ինչ որ պիտի նպաստէ քննութիւններու հեղասահ ընթացքին եւ արդիւններու ճշգրտութեան:




Նախարարութիւնը շեշտեց, որ «պաքալորիա»-ի պետական քննութիւններու գիտական եւ գրական բաժնիի բոլոր հարցարանները թուայնացուած պիտի ըլլան, բացի Արաբերէն լեզուի հարցարանէն, որ մասնակի թուայնացումով պիտի տրամադրուի:

-Սուրիական տեղական լրատուամիջոցներ յայտնեցին, որ սուրիական պետական համալսարաններէն ներս 2023-2024 ուսումնական տարեշրջանի առաջին կիսամեակի քննութիւնները սկիզբ պիտի առնեն 21 Յունուար 2023-ին:



-Տաուհայի մէջ գումարուած կենսուժի 12-րդ խորհրդաժողովի շրջագիծէն ներս, Սուրիոյ քարիւղի եւ հանքային հարստութեան Նախարար ղոկտ. Ֆիրաս Քատտուր հանդիպում մը ունեցաւ Իրաքի քարիւղի նախարար, կենսուժի հարցերու փոխվարչապետ Հայյան Ապտըլ Ղանի Սաուատի հետ:




Հանդիպումին ընթացքին կողմերը խորհրդակցեցան քարիւղի, կազի եւ կենսուժի ոլորտներուն մէջ միացեալ հետաքրքրութիւն ներկայացնող հարցերուն շուրջ:

Կողմերը առաջարկներ ներկայացուցին կենսուժի ոլորտին առնչուող գործակցութիւնը ամրապնդելու համար:

-Սուրիոյ վարչապետ Հուսէյն Արնուս անցնող օրերուն հանդիպում մը ունեցաւ Աբխազիոյ Հանրապետութեան արտաքին գործոց նախարար Այնալ Արտեզընայի եւ անոր ընկերակցող պատուիրակութեան հետ:

Հանդիպումին ընթացքին կողմերը խորհրդակցեցան տնտեսական, առեւտրական, ֆինանսական, մշակութային եւ այլ ոլորտներու մէջ երկու երկիրներուն գործակցութեան զարգացման շուրջ: Անոնք կարեւոր համարեցին երկու երկիրներուն միջեւ ստորագրուած համաձայնութիւնները կեանքի կոչելը եւ սուրիական-աբխազական միացեալ յանձնախումբի երկրորդ շրջանի պատրաստուիլը, ինչ որ կը ծառայէ երկու երկիրներու բազմոլորտ յարաբերութիւններու զարգացման:



Կողմերը խստիւ դատապարտեցին Պաղեստինի ժողովուրդին դէմ իւրայեւան իրարայաջորդ յարձակումները, որոնք տեղի կ'ունենան Միացեալ Նահանգներու աջակցութեամբ, շեշտելով մարդկութեան դէմ ի գործ դրուող նման ջարդերուն շուտափոյթ դադարեցման պահանջը:

Աբխազիոյ ԱԳ Նախարարը յայտնեց նաեւ, որ իր երկիրը կը դատապարտէ սուրիական հողերուն վրայ իւրայեւան իրարայաջորդ յարձակումները, որոնք կը խախտեն միջազգային օրէնքը:

Լուրեր Հայաշխարհին

ՊԵՏԵ Ե ԶԵՏԱՄՈՒՏ ԸԼԼԱՆՔ ԱՐՅԱՆԸ ԱԶԱՏԱԳՐԵԼՈՒ, ԱՅՆՏԵՂ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՀԱՐՅԻՆ ՄԵԶ

Արցախի իր անկախությունը ձեռք բերած է ինքնորոշման իրաւունքի հիման վրայ եւ ԶԶ ստորագրած որեւէ փաստաթուղթ չի կրնար արցախահայրությունը գրկել այդ իրաւունքէն: «Փաստինֆո»-ի հետ գրոյցի ընթացքին ըսաւ Արցախի Խորհրդարանի պատգամաւոր Վահրամ Բալայեան:

«ԶԶ ստորագրած ոչ մէկ փաստաթուղթ իրաւական առումով չի կրնար խանգարել, որ արցախահայրությունը իւրացնէ ինքնորոշման իրաւունքը: Ի հարկէ, եթէ, այսպէս կոչուած, «խաղաղութեան պայմանագիր» ստորագրուի՝ առանց Արցախի հետ կապուած վերապահութեան, հետագային կարելի է ատիկա պատրուակ հասարկել ու բարդացնել մեր ճանապարհը: Այսինքն, ինչպէս Ռուսիա շեշտած է, թէ ԶԶ իշխանությունը ճանջցած է Արցախը




Ատրպէյճանի մաս ու մենք ոչինչ կրնանք ընել, այնպէս ալ այդ պայմանագիրը կրնայ պատրուակ համարուիլ, եթէ չկան նաեւ, որ Արցախի հարցը լուծուի ստանայ, բայց կը կրկնեմ՝ ատիկա իրաւական առումով չի կրնար խանգարել, որ շարունակենք ինքնորոշման ճանապարհը: Զմոռնանք, որ Արցախը ինքնորոշուած էր իր տարածքին վրայ եւ ոչ թէ Ատրպէյճանի կամ այլ պետութեան», ըսաւ Բալայեան եւ համոզուի յայտնեց, որ որեւէ «խաղաղութեան պայմանագիր» չի ստորագրուի, քանի որ Պաքոյի փորձակը բաւական մեծ է եւ ան չի սահմանափակուի Արցախով, այլ կ'ուզէ բռնակազմել ամբողջ Հայաստանը:

Դիտարկելով համաշխարհային առօրեան՝ պատգամաւորը ուշադրութիւն հրաւիրած է այն հանգամանքին վրայ, որ պատմութեան ընթացքին եղած են բազմաթիւ դեպքեր, որ փաստաթուղթերն ու պայմանագրերը կը քուլտելն որոշ ժամանակ անց խախտուած են.

«Ի հարկէ, ցանկալի է ստորագրել այնպիսի պայմանագիր, որ ազգի շահերէն կը բխի, բայց որեւէ փաստաթուղթ չի խանգարել, որ այս կամ այն հարցը վերաբացուի կամ տարածքներու փոփոխութիւն տեղի ունենայ: Աշխարհի քաղաքական իրավիճակը անընդատ կը փոխուի, ու մենք պետք չէ դադարեցնենք պաշտպանելէ, տէր կանգնելէ մեր իրաւունքներուն, պիտի չդադարեցնենք հայրենիք վերադառնալու համար պայքարը: Պետք է հետամուտ ըլլանք Արցախը ազատագրելու, այնտեղ վերադառնալու հարցին մէջ», աւելցուց Բալայեան:

ԼՈՅՍ ՏԵՍԱԾ Ե Ռ. ՏԵՐ ՄԻՆԱՍԵԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ԱՆԿԱՐԶԱՔԱՐԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՏԱՐԱԾԱՆԵՐԳԱՆԻՆ ՄԵԶ» ԳԻՐԸ

ԶՅԴ Հայաստանի Գերագոյն Մարմինի անդամ, Խ. Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի (այսուհետեւ՝ ԶՊՄՅ) Համաշխարհային պատմութեան ամպիոնի վարիչ, պ. գ. դ., փրոֆեսոր Խաչատուր Ստեփանեանի աշխատասիրութեամբ, յառաջաբանով եւ ԶՊՄՅ-ի պատմութեան եւ հասարակագիտութեան հիմնարկի խորհուրդի երաշխաւորութեամբ լոյս տեսած է հայ ականաւոր պետական, կուսակցական



գործիչ, երկրառագմավարական մտքի եզակի ներկայացուցիչ Ռուբեն Տեր Մինասեանի «Հայաստանը եւ Աշխարհաքաղաքական Իրավիճակը Տարածաշրջանի մէջ» ծաւալուն հատորը:

Գիրքին մէջ ներկայացուած են մեծանուն գործիչի երկու կարեւոր ուսումնասիրութիւններ, որոնք իրենց բովանդակային ընկալումով մէկ ամբողջութիւն կը կազմեն: Հեղինակը մանրակրկիտ ձեռով վերլուծած է տարածաշրջանի մէջ՝ Հայաստանի շուրջ տեղի ունեցող մեծ տերութիւններու աշխարհակալական ձգտումներու անցած ուղին, արդի ժամանակաշրջանի մէջ անոնց ընթացքը եւ կարելի գարգացումները:

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Արցախի Հանրապետութեան Անկախութեան հանրաքուէին առնչութեամբ, 10 Դեկտեմբերին Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովի պատգամաւորները Արցախի Հանրապետութեան Անկախութեան հանրաքուէի, մարդու հիմնարար իրաւունքներու եւ ցեղասպանութեան կանխարգիլման միջազգային օրուան առիթով այցելած են Եռաբլուր պանթէոն՝ յարգանքի տուրք մատուցելու Արցախի ազգային-ազատագրական պայքարի ճանապարհին նահատակուած հայորդիներու շիրիմներուն:

Օրուան խորհուրդին շուրջ ԱԶ ԱԺ-ը հանդէս եկած է հետեւեալ յայտարարութեամբ.

«Արցախի ազգային-ազատագրական պայքարի պատմութեան մէջ ինքնորոշման եւ ժողովրդավարական սկզբունքների հիման վրայ Հանրապետութեան կայացման առաւատչեան 1991 թուականի Անկախութեան հանրաքուէն է: 1991 թուականի Անկախութեան հանրաքուէն այն հիմնաքարն էր, որի վրայ կառուցուեց Արցախի Հանրապետութիւնը եւ դարձաւ համայն հայութեան պարծանքն ու յաղթանակի փարոսը: Արցախի ժողովուրդը 2006 թուականի Նոյն օրը Սահմանադրութեան ընդունման հանրաքուէով մէկ անգամ եւս արտայայտեց անկախ պետութիւն ունենալու եւ ազատութեան համար պայքարի ուղին անշեղօրէն շարունակելու իր կամքը:

2023 թուականի Սեպտեմբերի 19-ին Ատրպէյճանի ռազմական յարձակումին հետեւանքով գոհուեցին հարիւրաւոր մեր հայրենակիցներ, այդ թուում՝ երեխաներ եւ կանայք, հայաթափուեց հայ ժողովրդի հազարամեայ հայրենիք Արցախը:



Անվտանգութեան եւ իրաւունքների իրացման անհնարինությունից ելնելով՝ Արցախի բնակչությունը դիմեց հայրենիքը լքելու ծայրայեղ քայլին: Այս ամենին իր գնահատականը տուեց նաեւ միջազգային հանրությունը: Ֆրանսայի եւ Կիպրոսի արտաքին գործերի նախարարությունները, Գերմանիայի Պունտեթագը, Աւստրիայի եւ Նիտերլանտների խորհրդարանները, Եւրախորհրդարանը, Տեղասպանութեան կանխարգելման Լեմբինի ինստիտուտը եւ այլ միջազգային հեղինակաւոր կազմակերպություններ Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցածը որակեցին որպէս էթնիկ զտում:

Ատրպէյճանը, հայ ժողովրդի դէմ ցեղասպանութիւն իրականացնելուց յետոյ, միջազգային դերակատարների աչքին փոշի փչելու եւ իր արարքն արդարացնելու համար, որպէս ռազմական գործողութիւնների դադարեցման նախապայման, Արցախի Հանրապետութեան Նախագահին պարտադրեց ստորագրել փաստաթուղթ:

Ի սկզբանէ գիտակցելով Ատրպէյճանի կողմից պարտադրուող փաստաթղթի հակասահմանադրականութիւնը, գնահատելով խաղաղ բնակչութեանը ցեղասպանութեան ենթարկելու, նրա ազատ տեղաշարժը խոչընդոտելու եւ կամայական ձեռքաւարկութիւնների հնարաւոր վտանգների առկայութիւնը՝ Նախագահի կողմից ընդունուեց իրամանագիր, որով մինչեւ 2024 թուականի Յունուարի 1-ը պետք է կազմալուծուէին Արցախի պետական ինստիտուտները, իսկ բնակչութիւնը որոշում կայացնելը՝ լքել հայրենիքը կամ համարկուել Ատրպէյճանի մէջ:

Հաշուի առնելով Արցախի հարցի վերջնական փակմամբ շահագրգռուած կողմերի կատարուած եւ կատարուող քայլերի ինտենսիվութիւնն ու դրանում շահագրգիռ կողմերի ազդեցիւ վարքագիծը՝ Ազգային ժողովը վերահաստատում է իր յանձնառութիւնը՝ տէր կանգնելու Արցախի ժողովրդի իրաւունքներին եւ յայտնում իր պատրաստակամութիւնը՝ շահագրգիռ կողմերի հետ քննարկելու բոլոր խնդրայարոյց հարցերը:

Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովը, հաւատարիմ Արցախի ժողովրդի ազատ կամքի արտայայտման արդիւնքում ստացած մանդատին, վճռական է պաշտպանելու հայ ժողովրդի հազարաւոր հայորդիների արիւնով ու քրտինքով իւրացուած իրաւունքներն ու ազատութիւնը:

ՏԻԳՐԱՆ ԴԻՆՊԱՇԵԱՆ. «ՀՅ ԴԱՇՆԱԿԳՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱՀԱՍ ՎՏԱՆԳԻՆ ԴԻՄԱՑ, ԻՆՉՊԷՍ ՄԻՇՏ ԻՐ ԳՈՅՈՒԹԵԱՆ 133 ՏԱՐԻՆԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՏԵՒՈՂՈՒԹԵԱՆ ՊԱՐՏԻ ՎԵՐԱՆԱՅԻԼ ԻՐ ՌԱԶՄՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՏԱՆՁՆԵԼ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻՆ ՂԵԿՎՎԱՐՈՒԹԻՒՆԸ»

(ՅՅԴ 133-ամեակի հանդիսության արտասանուած բանախօսությունը)

Հայ Յեղափոխական Դաշնակցության Օրը կը յիշատակուի 1900-էն՝ Կուսակցութեան հիմնադրութեան տասնամեակէն ի վեր: 133-րդ տարին թելակոխած ենք արդէն. զարմանալի կը թուի այս փոփոխական աշխարհին մէջ, պատերազմներու եւ քաղաքական վերիվայրումներու թոհուրոհին մէջէն անցած այս կազմակերպութեան երկարակեցութիւնը: ՀՅ Դաշնակցութիւնը աշխարհի ամենահին կուսակցութիւններէն մէկն է, թերեւս ամենահինը Նոյնիսկ:

Շնամ իբրեւ հայ ազատագրական շարժումի կազմակերպութիւն, ան փորձած է մէկ դրօշի տակ համախմբել հայ ազգին ազատութեամբ տոգորուած բոլոր յեղափոխական խումբերը:

Հիմնադիրները ուզած են յեղափոխականներու դաշնակցութիւն ստեղծել, համախմբել բոլոր ուժերը ազգի ու հայրենիքի ազատութեան ընդհանուր ու միակ դրօշի մը տակ: Յաջողած են մասնակիօրէն, ինչպէս մասնակիօրէն կը յաջողին համախմբել բոլորը մինչեւ այսօր:

Իր ծննդեան առաջին իսկ տարիներէն, Դաշնակցութիւնը համատարած գործունեութեամբ կուսակցութիւն է, համաշխարհային կազմակերպութիւն է:

Տարեկան այս հաշունետուութեամբ հայ ժողովուրդին ու հայոց հայրենիքին ծառայութեան համար կատարած իր աշխատանքին, թէ յաջողութիւններուն եւ թէ՛ ձախողումներուն անդրադառնալով, մենք կը վերանորոգենք մեր ուխտը տէր կանգնելու բովանդակ հայութեան բովանդակ պահանջներուն ու շահին:

Դաշնակցութիւնը ներկայ է այն բոլոր վայրերուն մէջ, ուր հայեր կ'ապրին, շրջանին պատշաճօղ տարատեսակ կառոյցներով եւ ուղեկից կազմակերպութիւններով:

Դաշնակցութիւնը ներկայ է Հայաստանի մէջ, Արցախի ու Ջաւախքի մէջ, ներկայ է լայնատարած Սփիւռքի գրեթէ բոլոր համայնքներուն մէջ, աշխարհի չորս ծագերուն:

Գործունեութեան միջավայրերու տարբերութիւնները, կազմակերպական շրջաններու այլազանութիւնը, մեր ապրած երկիրներու քաղաքական վարչաձեւերու տարատեսակ բնոյթը բնականաբար պետք է յառաջացնեն ղեկարարութիւններ, երեւան բերէին տարակարծութիւններ:

Այս անպատեհութիւնները նկատի ունենալով, արդէն 1892-ին գումարուած իր առաջին ընդհանուր ժողովին, ՀՅ Դաշնակցութիւնը, որ յեղափոխականներու դաշնակցութեան վերածուած էր յեղափոխական դաշնակցութեան, որդեգրած էր կազմակերպական ապակերպողական դրօշիւնը, կազմակերպական իր շրջաններուն վստահելով ինքնուրոյնաբար որդեգրելու գործնական աշխատանքի մարտավարութեան իրենց պատշաճօղ եղանակը:

Բայց ինչպէ՞ս կը պատահի, որ այսքան տարբերութիւններով հանդերձ, մենք ամէն տեղ կը տեսնենք դաշնակցական գաղափար, դաշնակցական ուղղութիւն, դաշնակցական գործ: Գաղտնիքը դաշնակցութեան դաւանած այն գաղափարական ու բարոյական կեդրոնացումն է, զոր պարբերաբար ՀՅԴ ընդհանուր ժողովը կը վերանորոգէ իր հռչակած ռազմավարութեամբ:

Դաշնակցական մարմինները կը գործեն հետեւելով միեւնոյն ծրագրին, գործադրելով Նոյն ռազմավարութիւնը, բայց տարբեր եղանակներով: Շնորհիւ գաղափարական-բարոյական կեդրոնացման, Դաշնակցութիւնը կը մնայ կուռ ու կազմակերպ կուսակցութիւն:

Ինչի՞ մէջ կը կայանայ ՀՅ Դաշնակցութեան գաղափարական-բարոյական կեդրոնացումը: Ի՞նչ է իր գաղափարին եռութիւնը, իր աշխարհայեացքին կիզակետը:

Դաշնակցութեան դաւանանքը չորս ուղղութիւն ունի. «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը իր էութեամբ, աշխարհայեացքով եւ անդնդներով ազգային, ընկերվարական, ժողովրդավարական եւ յեղափոխական կուսակցութիւն է», կը պատգամէ ՀՅԴ ծրագիրը:

Դաշնակցութեան գործը ճշմարտապէս ըմբռնելու համար, պետք է իմանալ այս չորս ուղղութիւններուն իմաստը:

ա. - Դաշնակցութիւնը ազգային կուսակցութիւն է:

Դաշնակցութեան գործունեութեան միջավայրը հայ ազգն է: Ան պահպան ու պաշտպան է հայ ազգի բովանդակ շահերուն, ուր ալ գտնուին այդ շահերը: Դաշնակցութիւնը պաշտպան կը կանգնի Նոյնիսկ զինք քննադատողներուն, եթէ անոնք հայ ազգին պատկանելու պատճառով հալածանքի ենթակայ կ'ըլլան:

բ. - Դաշնակցութիւնը ընկերվարական կուսակցութիւն է:

Դաշնակցութիւնը շատագուր է հայազգի անհատներու ընկերային ու տնտեսական կենսական պահանջներու գոհացման:

Դաշնակցութիւնը դժմ է շահագործման բոլոր ձեւերուն: Կողմնակից է աշխատանքի ազատութեան եւ գնահատումի արդարութեան: Իր շարքերուն կ'անդամակցին մտաւորականն ու աշխատաւորը, հարուստն ու բարեկեցիկը, օրուան հացը հագի վաստկողը եւ Նոյնիսկ աղքատը: Բոլորը հաւասար են. Դաշնակցութիւնը ապադասակարգային կուսակցութիւն է,

որ բոլորին համար կ'ուզէ ապահովել իրենց կարիքները բաւարարող եկամուտ ու բարօր կենցաղ:

գ. - Դաշնակցութիւնը ժողովրդավար կուսակցութիւն է:

Դաշնակցութիւնը իր ուժն ու ներշնչումը կը ստանայ հայ ժողովուրդէն: Իր պահանջատիրական գործունեութեան ակունքը հայ ազգի առհասարակ ձգտումներէն կը բխի: Դաշնակցութեան եւ հայ ժողովուրդին միջեւ կայ անտեսանելի համարկում: Դաշնակցութեան կամքը կամքն է հայ ազգին ու ան ուշադիր է, որ չլքուի այդ կամքէն: Այսպէս կը բացատրուի այն բացայայտ իրողութիւնը, որ դժուար պահերուն ամէն մարդ, դաշնակցական շարքայինը, համակիրը, չէզոքը եւ Նոյնիսկ հակառակորդը Դաշնակցութենէն Նախածեռնութիւն ու գործ կ'ակնկալեն:

դ. - Դաշնակցութիւնը յեղափոխական կուսակցութիւն է:

Յեղափոխութիւնը չ'ենթադրէր անպայման բռնի ու բուռն գործելակերպ: Յեղափոխութեան եւ յեղափոխականութեան էութիւնը քաղաքական,



տնտեսական ու ընկերային վիճակին՝ եղածին, հիմնովին փոփոխութիւնն է, վիճակի մէջ փոխարինումը Նոր վիճակով, վարչաձեւի փոխարինումը Նոր վարչաձեւով:

Հայ ազգին ներկայ վիճակը վատ է, հետեւաբար՝ անընդունելի: Հայրենիքը մասնատուած է, ժողովուրդը՝ ցրուած աշխարհով մէկ: Դաշնակցութիւնը կ'առաջադրէ հողահաւաքի ու հայահաւաքի միջոցով շրջել այս վիճակը: Նախընտրաբար խաղաղ միջոցներով, իսկ եթէ հարկ ըլլայ՝ Նաեւ ուժային միջոցներով: Իբրեւ պատասխանատու կազմակերպութիւն, Դաշնակցութիւնը կը բացառէ արկածախնդրութիւնը եւ կ'ենթարկուի ժամանակի պայմաններուն ու ժողովուրդի պահանջին:

Բազմատեսակ ու բարդ առաջադրանքները յատուկ չեն կուսակցութեան մը, սակայն Դաշնակցութեան առաջադրանքները գրեթէ պետութեան մը կողմէ կատարելի աշխատանքներու բնոյթը ունին: Բայց Դաշնակցութիւնը պետութիւնն է: Տրամաբանական է ընդունիլ, որ բոլոր նպատակները միասին ու Նոյն թափով կարելի չէ հետապնդել: Նախապատուութիւն ճշդելու, ընտրութիւն կատարելու անհրաժեշտութիւն կայ, միշտ եղած է:

Ինչպէ՞ս ճշդել Նախապատուութիւններու դասաւորումը: Ահա այստեղ կը յայտնուի ժամանակամիջոցի ու առկա միջոցներու իրամայականը: ՀՅ Դաշնակցութեան ընդհանուր ժողովը կ'ուսումնասիրէ աշխարհաքաղաքական իրավիճակը, հայութեան ապրած երկիրներու ու յատկապէս հայաստանամերձ շրջաններու ընդհանուր վիճակը, Հայաստանի կացութիւնը, հայ ժողովուրդի պատրաստակամութիւնը եւ Նաեւ իր շարքերու պարզած վիճակը, եւ այս տուեալներու հիման վրայ կը ճշդէ ծրագիրն իրեն ռազմավարութիւն մը, պարտադիր բոլոր շրջաններուն համար:

Ընդհանուր ժողովը այս ձեւով ճշդած կ'ըլլայ տուեալ ժամանակին կատարելի աշխատանքին գլխաւոր թիրախները: Անկա մարտավարական որոշումներ չի կայացներ, ապակեդրոնացման հիման վրայ գտնուող վստահելով շրջաններու ժողովներուն ու մարմիններուն:

Թուե՞նք այն աշխատանքները, որոնք անհրաժեշտաբար պետք է հետապնդուին ՀՅ Դաշնակցութեան կողմէ:

1. - Արտասահմանի մէջ

Մերձաւորարեւելեան ու հայաստանամերձ մեր երկու գաղութները կը դիմագրաւեն քաղաքական անկայունութեան, ապահովութեան բացակայութեան եւ տնտեսական տագնապի դժուար իրավիճակներ: Հայութեամբ բարբախուն, գործունեայ, ազգային բազմազան կառոյցներով հարուստ լիբանանեան եւ տուրիական համայնքները կը Նօ սրանու տարիներ ի վեր: Նիւթական կարողութիւններու տէր մարդիկ կը գաղթեն երկրէն, կը մեկնին յատկապէս ուսեալ երիտասարդներ, որոնք անմիջական ապագային գաղութային ղեկավարութիւն պետք է գոյացնեն:

ՏԻԳՐԱՆ ԴԻՆՊԱՇԵԱՆ...

Սկիզբ՝ էջ 4

Ոմանք կը հաստատուին Հայաստան, որ ողջունելի է, սակայն ասոնք փոքրամասնություն կը կազմեն: Մեծամասնությունը աչքերը ուղղած է դեպի Արեւմուտք: Դժուար, շատ դժուար պայմաններու տակ կ'ապրին Մերձաւորարեւելեան մեր կարեւոր գաղութները:

ՀՀ Դաշնակցութիւնը բնականաբար անտարբեր չի կրնար մնալ վտանգալից կացութեան դիմաց: Դաշնակցութիւնը կը լարէ իր ուժերը կայունացնելու համար վիճակը, գոհացում տալով, իր կարելիութեան սահմաններուն մէջ, այս գաղութներու տնտեսական, ընկերային եւ ապահովական կարիքներուն:

Մնացեալ շրջաններուն մէջ առաջնահերթը հայկական ինքնութեան պահպանումն է եւ հոն ուր կարելի է, Հայ Դատի հետապնդումը: Նմանապէս, հոն ուր կարելի է, Դաշնակցութիւնը կը մասնակցի տուեալ երկրի քաղաքական կեանքին, հայերու իրաւունքներու պաշտպանութեան հետ Հայաստանին ու Հայ Դատին օգտակար դառնալու հաստատ մտասուեռումով:

Իբրեւ ընդհանուր կանոն, Դաշնակցութեան համար գաղութներու մէջ վարկի եւ ուժի ամէն կուտակում պետք է ի սպաս դրուի Հայաստանին, Արցախին ու Հայ Դատին:

Հայաստանէն դուրս, բազմաթիւ գաղութներու մէջ, մեր քաղաքական դերակատարութիւնը երկրին ու արտաքին քաղաքականութեան վրայ չի կրնար որոշիչ ազդեցութիւն ունենալ: Զիչ բացառութիւններ կան: Դաշնակցութիւնը եւ իր ուղեկից կազմակերպութիւնները, պարագայաբար նաեւ հայկական ուրիշ կուսակցութիւններ ու միութիւններ կը բաւականանան հայկական ինքնութեան պահպանման նպատակով իրաւունքներու ու արտօնութիւններու ապահովմամբ եւ Հայաստանին ու Հայ Դատին ի նպաստ քարոզչութեամբ: ՀՀ Դաշնակցութիւնը առաջատար է, գրեթէ ամէնուր, այս մարզերուն մէջ:

2.- Հայաստանի մէջ ուրիշ է մօտեցումը: Եթէ Հայաստանէն դուրս Դաշնակցութիւնը կը գործէ ուշադրութիւնը սեւեռած դէպի Հայաստան ու Արցախ, նոյնիման Հայաստանի մէջ Դաշնակցութիւնը ուղղակի մասնակցի է պետութեան կեանքին: Իրողութիւն մը, որ շատերու կողմէ չի հասկցուիր, երբ կ'ակնկալեն արտասահմանեան տեսակի գործունեութիւն Դաշնակցութեան հայաստանեան կառոյցէն:

32 տարի առաջ անկախացած Հայաստանի մէջ, ինչպէս Հայաստանի մեր հայրենակիցները կ'ըսեն, պետական կառոյցները տակաւին ամբողջապէս չեն կայացած ու պետական մտածողութիւնը չէ արմատացած: Ժողովրդավարութեան քողին տակ կը կատարուին գործեր, կը ճշդունին քաղաքական ուղղութիւններ, որոնք ժխտումն իսկ են ժողովրդավարութեան դասական ըմբռումին:

Դաշնակցութեան հայաստանեան կառոյցը կը գործէ դժուար պայմաններու տակ, արհեստականօրէն ստեղծուող ժխտական մթնոլորտի մէջ ու այս պատճառով իր արգասաբերութիւնը համապատասխան չէ իր թափած ճիգին:

ՀՀ Դաշնակցութեան հայաստանեան կառոյցը սկիզբ առաւ 1990-ի ամրան, ինչպէս ըսուեցաւ այն ատեն՝ վերընձիւղուեցաւ: Գրեթէ միաժամանակ ստեղծուեցան Արցախի եւ Ջաւախքի կառոյցները: Այս կառոյցները ստեղծուեցան ՀՀ Դաշնակցութեան մասին վիպական պատկերացում ունեցող անհատներէ: Մեծ էր թիւը անդամագրուող մտաւորականներու, ուսումնական մարզի աշխատողներու: Նոյն շրջանակներէն կային նաեւ մեծ թիւով համակիրներ: Դաշնակցութեան շարքերուն միացան կարեւոր թիւով երիտասարդներ, առաւելաբար համալսարանական ուսանողութիւնէն: Ծուտով կազմուեցաւ ՀՀ Դաշնակցութեան Միութիւնը: Այս բոլորին գաղափարական ուղղութեան եւ նուիրումի պատրաստակամութեան նկատմամբ կարելի չէ կասկածանքով մօտենալ: Պակտողը, բնականաբար, կազմակերպական կազմաւորումն էր, որ հապճեպօրէն կարելի չէր իրականացնել:

1988-ին սկսած Ղարաբաղեան պահանջատիրական շարժումը արդէն թեւակոխած էր զինեալ պայքարի փուլը: ՀՀ Դաշնակցութիւնը, ղարաբաղեան առաջին պատերազմին, հաւատարիմ իր յեղափոխական աւանդութիւն, նետուեցաւ հետզհետէ ծաւալող պատերազմի կրակներուն մէջ: Դաշնակցութեան շարքերուն միացած երիտասարդները դարձան Արցախի ազատագրութեան մարտիկներ: Թեւ Արցախը ազատագրուեցաւ ու հռչակեց իր անկախութիւնը, սակայն հազարաւոր նահատակներու շարքին Դաշնակցութիւնը կորսնցուց իր գաղափարական երիտասարդութեան անելի քան կէտը:

Դաշնակցութիւնը նոյնիսկ ստեղծեց Ծուշիի առանձնակի գումարտակը, իսկ անելի ուշ՝ Շահումեանի շրջանի անկումէն ետք՝ Ղարաբաղի արծիւները, Շահէն Մեղրեանի ղեկավարութեամբ: Ասոնք հետագային փոխանցուեցան նորակազմ հայկական բանակին:

Դաշնակցութեան վերակազմակերպումը թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Արցախի մէջ մտահոգութեամբ դիմաւորուեցաւ անկախացած Հայաստանի ղեկավարութեան կողմէ: Անոր հետզհետէ աճող ժողովրդականութիւնը վախցուց նախ Ղարաբաղ Կոմիտէն, ապա Հայոց Համագայինի Շարժումի ղեկավարութիւնը, որ ինքզինք ժողովրդավար հռչակելով հանդերձ, կը յաւակներ առանձին ձեւաւորել Հայաստանի նորաստեղծ պետականութիւնը:

Դաշնակցութեան կայացումը Հայաստանի մէջ շատ խութերու հանդիպեցաւ ու բազմաթիւ փորձութիւններ դիմագրաւեց: Կորուստներ ունեցաւ ան, բայց դիմացաւ ու շարունակեց Հայաստանի քաղաքական կեանքին մէջ ներկայութեան մնալ:

Ուղեկից միութիւնները եւս հաստատուեցան, թեւ համեստ պայման-

ներով, բայց գործեցին ու կը շարունակեն գործել: Հայ Օգնութեան Միութիւնը եւ ՀԱՄԻ-ը ՀԱՍԿ (Հայաստանի Սկաւտական կազմակերպութիւն) անունին տակ գործուն կազմակերպութիւններ են Հայաստանի մէջ եւ էին նաեւ Արցախի մէջ: Համագայինը սկսաւ իբրեւ միութիւն եւ ունեցաւ նշանակովի վարչութիւն մը, սակայն նկատի ունենալով, որ ստեղծագործական բոլոր ճիւղերը ունին իրենց միութիւնները, բաւականացաւ գրասենեակի մը ստեղծումով: Այժմ գոյութիւն ունին Երեւանի եւ Կիւմրիի գրասենեակները, իսկ Ստեփանակերտի գրասենեակը կը գործէ Երեւանէն:

Հայաստանի մէջ 2018-ին տեղի ունեցաւ իշխանափոխութիւն մը, զոր կազմակերպողները կոչեցին «Թաւշեայ Յեղափոխութիւն»: Զանի որ վարչաձեւի ոչ մէկ փոփոխութիւն կատարուեցաւ, եղածը սխալ է յեղափոխութիւն որակել: Ծուրջ 30 տարիէ ի վեր գործող երկրի իշխանաւորներուն փոփոխութիւնը թերեւս հարկաւոր էր, անկախութեան պայմաններուն տակ աճած նոր սերունդի մը առիթ ընծայելով ստանձնելու երկրին քաղաքական ղեկավարումը: Սակայն եկող նորերը, անփորձ բայց յաւակնոտ, երկիրը առաջնորդեցին պատերազմի Ատրայեճանի հետ եւ ստեղծեցին վտանգաւոր վիճակ թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Արցախի համար: Արցախը կորսնցուցինք, Հայաստանէն հատուածներ գրաւուեցան եւ վտանգը կը շարունակէ մնալ ահագանգիչ:

Հայաստանի իշխանութիւնները կը յայտարարեն, որ կը վարեն քաղաքականութիւն մը, որ Հայաստանը պիտի վերածէ «խաղաղութեան խաչմերուկի»: Կ'ըսեն ու կը կրկնեն, որ մեր հայրենիքը Հայաստանի Հանրապետութիւն կոչուող պետութիւնն է միայն: Ո՛չ Արցախ կայ, ո՛չ Արեւմտեան Հայաստան: Հայ Դատ գոյութիւն չունի: Յեղասպանութիւնն չէ եղած: Հայաստանի մէջ Արցախի պետական հիմնարկներու գործունեութիւնը իբրեւ գաղթական իշխանութիւն, կը նկատուի վտանգաւոր Հայաստանի պետական անվտանգութեան համար: Եփորթելով իշխանութիւնը պետութեան հետ, ամէն քննադատութիւն կը մերժուի եւ ընդդիմադիրները հալածանքի կ'ենթարկուին: Անգամ մը եւս ՀՀ Դաշնակցութիւնը կանգնած է իր սկզբունքներուն հաւատարմութեամբ գործելու դժուարութեան առջեւ:

Ազգին ու հայրենիքին նկատմամբ պատասխանատուութիւնը կ'արգիլէ Հայաստանի ապահովութիւնը խախտող միջոցառումներու դիմել: Ժողովուրդը պատերազմի արդիւնքէն շջմած, հոգեբանական տեղատուութեան ենթարկուած է ու չի գալթակիր այսքան բացորոշ սխալներու առիթով:

Դաշնակցութիւնը ձեռնածալ չի կրնար մնալ հայոց պատմութիւնը ժրխտող, Հայ Դատը նսեմացնող երեւոյթներուն նկատմամբ: Ստեղծուած նոր ու աննախընթաց կացութեան յանդիման, բոլոր ազգային ուժերը, եւ անոնց կարգին ՀՀ Դաշնակցութիւնը, կը փնտռեն կացութիւնը շրջելու ուղիներ: Ու թեւ ուղիները գոյութիւն ունին, սակայն կրնան ապակայունացնել Հայաստանը եւ առիթ տալ թշնամիին անգամ մը եւս Հայաստանէն բաժնիներ գրաւելու: Ուրեմն զգուշութիւնը պայման է:

Անհրաժեշտութիւն կայ ընդդիմադիր ու ազգային ուժերը միաւորելու եւ ստեղծելու ազգային փրկութեան ճակատ մը:

Բոլորին ճիգերը, Հայաստանէն Արցախ ու Ջաւախք, Լիբանան-Սուրիայէն մինչեւ Եւրոպական ցամաքամաս, Հիսիսային Ամերիկայէն մինչեւ Հարաւային Ամերիկա, Աւստրալիա, բոլորին, բոլորին ճիգերը պետք է միաւորուին ի խնդիր Արցախի ու Հայաստանի փրկութեան:

ՀՀ Դաշնակցութիւնը վերահաս վտանգին դիմաց, ինչպէս միշտ իր գոյութեան 133 տարիներու պատմութեան տեւողութեան պարտի վերանայիլ իր ռազմավարութիւնը եւ ստանձնել հայրենիքի փրկութեան գործին ղեկավարութիւնը:

Գործ կայ ընելիք, կարելի չէ յապաղիլ, կարելի չէ դանդաղիլ, կարելի չէ տատամսիլ: Իրաւունք չունինք, ուրեմն՝ Յառաջ դէպի անխուափելի յաղթանակ:

«ԳԱՆՁԱՍԱՐ»

ՊԱՇՏՈՆԱԿԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՄ

Խմբագիր՝ Զարմիկ Գիլմբոջեան-Պողիկեան
Սրբագրիչ՝ Նուշիկ Սողոյեան-Առաքելեան
Ձեւաւորող՝ Յովսէփ Գալստիան
Գրաշար՝ Անի Թոփալեան-Սարուխան
Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարէն Պապեան-Աղայեկեան
Կայքէջի պատասխանատու՝ Աւօ Պողոսեան
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Գիլմբոջեան
Հաշուապահ՝ Յովիկ Պարսումեան 0957 953 811

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամէնէն ուշը Երկուշաբթի օրերը:
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարու:
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով, կապ հաստատելով թերթիս հաշուապահին հետ:

ՀԱՐՑԱԶԹՈՅ

ՉԱՔԱՐ ԲԵՇԻՇԵԱՆ. «ՄԵՆՔ ԿՐ ՀԱՄԱՍՆԵ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ԿԱՐԵՒՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՅԺՄԵԿԱՆՈՒԹԵԱՆ ՈՒ ՀԱԿԱՌԱԿ ՏԻՐՈՂ ԴԺՈՒՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ, ԼԾՈՒԱԾ ԵՆՔ ՉԱՆՈՆԵ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎՐՇԱԿԻՆ»

Համազգայինի 95-ամեակի յոբելեանական Հայլայի հանդիսութեան ներկայ էին Համազգայինի Կեդր. Վարչութեան երեք անդամներ, երկուք՝ յատուկ այս առիթով ժամանած էին Լիբանանէն: «Գանձասար» այս պատեհութիւնը օգտագործելով մտերմիկ հարցազրոյց մը ունեցաւ Համազգայինի Կեդր. Վարչութեան ատենապետ, երաժշտագետ Չաքար Բէշիշեանի հետ: Ստորեւ կը ներկայացնենք զայն.

«Գանձասար»- Մշակոյթը երկրի ծանր պայմաններուն մէջ անգամ յոյսի շողը, ստեղծագործելու կայծը վառ կը պահէ մեր կեանքին մէջ ընդհանրապէս: Համազգայինի 95-ամեակը առիթ է վերաշխուժացնելու մեր աշխատանքներն ու նոր թափ տալու անոնց, յատկապէս կաշկանդիչ մեր պայմաններուն տակ: Կեդրոնական Վարչութիւնը Համազգայինի հիմնադրութեան 95-ամեակին առիթով ինչպիսի՞ նախաձեռնութիւններ առաջնահերթութիւն համարեց:

Չաքար Բէշիշեան- Թէեւ ամեակները իրենց հետ նորութիւն չունին, բայց մարդիկ կամ միութիւններն են, որոնք նորութիւններ կը բերեն իրենց գաղութներէն ներս: Համազգայինի 95-ամեակը առիթ ընծայեց յիշատակելու ու վերատեսութեան ենթարկելու ցարդ կատարուածը եւ ուրուագծելու ապագան:

Այս առումով Համազգայինի 19 շրջաններէն իւրաքանչիւրը իւրայատուկ ձեւով տարուան ընթացքին յիշատակեց Համազգայինի ծննդեան 95-ամեակը: Հայլայի մէջ մեծ շուքով տեղի ունեցաւ յոբելեանական հանդիսութիւնը, իսկ աւելի ուշ պիտի կազմակերպուի նաեւ Միացեալ Նահանգներու եւ Ժամայի մէջ: Հայաստանի մէջ կազմակերպուած Յոբելեանական Մայր ձեռնարկի վայրը շատ խորհրդանշական էր, որովհետեւ տեղի ունեցաւ այժմու Արմենիան փողոցի հրապարակին մօտ գտնուող «Աննո Բարաջանեան» դահլիճին մէջ: Այդ փողոցով էր, որ մեր միութեան հիմնադիրները դէպի խորհրդարան եւ կառավարութեան շէնք կ'երթէնէին, հոն կը գօսէին եւ կը խորհրդակցէին, այլ խօսքով՝ անոնց սիրած ու ապրած վայրը եղած էր այնտեղ:



Երկրորդ ձեռնարկը «Լիւսի Թիւթիւնեան» ցուցասրահին մէջ կազմակերպուած հայրենի եւ սփիւռքահայ գեղանկարչներու եւ արուեստագետներու հաւաքական ցուցահանդէսն էր: Երրորդը՝ արցախցի գեղարուեստավարժ լուսանկարիչ Դաւիթ Ղազարեանի «Արցախ. Անաւարտ Պատերազմ» պատկերազարդին շնորհանդէսն էր: Ան գեղարուեստական արժեք է պատմական նշանակութիւն ունեցող աւելի քան հարիւր նկար պարունակող հատոր մըն է, որ կը պատկերէ ամբողջ Բառաստօրեայ պատերազմը, ներկայացուած՝ հայերէն, անգլերէն եւ ռուսերէն, որպէսզի օտարներու մէջ տարածուի ճշմարտութիւնը, պարզ ու ճշմարտութիւնը պատերազմի ընթացքին տեղի ունեցած բարբարոսութիւնները:

Չորրորդը՝ Համազգայինի վերջին քանի մը հրատարակութիւններուն շնորհանդէսներն էին: Այսպէս՝

Ա. «soaring words» (Ճախրող բառեր) անգլերէն հրատարակութեան, որ հայերէնի թարգմանեց Կեդրոնական Վարչութեան անդամ ընկի. Արեւիկ Գաբրիելեան: Ապա նաեւ Ամերիկայի Նիւ Եորքի մասնաճիւղի երեք հրատարակութիւններու շնորհանդէսները:

Բ. «Ձայն Արցախական», որ արցախցի գրողներու հատընտիր մըն է: Ծրագրուած է նաեւ յառաջիկային իրականացնել արցախցի բանաստեղծներու հաւաքածոներու հրատարակութիւն մը:

Գ. «Ձայն Հիւսիսային», որ Մոսկուայի, Ս. Փետրոսպոլի եւ Վրաստանի հայ գրողներու հատընտիր մըն է:

Դ. «Ձայն Երթողական», որ մինչեւ քառասուն տարիքի հայրենի երիտասարդ բանաստեղծներու հաւաքածոն է:

Հինգերորդը՝ «Բագին» ամսագրի 60-ամեակին եւ անոր թուայնացման շնորհանդէսի ձեռնարկն էր, որուն ներկայ գտնուեցան խմբագիր Սոնիա Սանան, ինչպէս նաեւ ականաւոր գրաքննադատներ ու գրողներ:

«Բագին» ամսագրի 60-ամեակը յիշատակուեցաւ նաեւ 8 Դեկտեմբերին, Լիբանան:

Մարտ ամսուն, Լիբանանի մէջ տեղի ունեցած Համազգայինի Յոբելեանական հանդիսութեան ընթացքին ներկայացուեցաւ վաւերագրական 20 վայրկեանոց տեսերիզ մը, որ կ'ընդգրկէր Համազգայինի աշխարհասփիւռ կառոյցի այժմու վիճակը: Հետագային տեսերիզը ցուցադրուեցաւ նաեւ տարբեր երկիրներու մէջ:

«Գ.»- 95 տարի ետք, Համազգայինը ի՞նչ մարտահրաւերներ կը դիմագ-

րաւէ այսօր:

Չ.Բ.- Հիմնադիրներուն դիմագրուած մարտահրաւերները այսօր ալ կը մնան անփոփոխ: Արդ, մեր լուսամիտ հայրերը ստեղծեցին այս միութիւնը, որպէսզի Սփիւռքի մէջ հայը հայ ապրի, միշտ անջակից մնայ իր պատմութեան եւ մշակոյթին ու կրթութեան ճամբով Հայ Դատը արծարծ պահէ: Այսօր կու գանք ըսելու, որ նոյն մարտահրաւերներն են, այնքան ատեն որ տակաւին մեր ազգային տեսլականին չենք հասած, աւելին. նոր կորուստներ ունինք: Համազգայինի մեկնակետը, ծրագիրը, հեռանկարը եւ նպատակակետը կը մնան նոյնը՝ Սփիւռքի տարածքին պայքարի ձուլման դէմ, զարգացնել հայ անհատին կապը մշակոյթին հետ եւ ի հարկէ զարգացնել մշակոյթը ինքնին՝ մշակոյթի նոր հորիզոններ բանալով:

«Գ.»- Սուրիոյ Շրջանի Համազգայինի կառոյցներու գծով Կեդրոնական Վարչութիւնը ի՞նչ ծրագիրներ ունի, նկատի ունենալով, որ յետ պատերազմին եւ երկրաշարժի աղետին շրջանը տնտեսական ծանր իրավիճակ կը տառապի, սակայն ունի աշխատունակ մարդու՞:

Չ.Բ.- Պատերազմի ողջ տեւողութեան եւ երկրաշարժի աղետին ընթացքին, Կեդրոնական Վարչութիւնը մամուլի եւ Սուրիոյ Շրջանային Վարչութեան ճամբով իրագրել էր բոլոր այն դժուարութիւններուն, զորս սուրիահայ գաղութը կը դիմագրուէր ու կը դիմագրուէ մինչեւ այսօր: Գալ, հասնիլ այստեղ անհրաժեշտ էր մեզի համար, որպէսզի անձամբ տեսակցէինք տեղւոյն մեր ընկերներուն հետ, ծանօթանայինք անոնց դժուարութիւններուն եւ ինչու չէ յաջողութիւններուն ու նուաճումներուն, որոնց ականատեսը եղանք այս երկու օրուան ընթացքին:

Ուրախալի է հաստատել, որ հակառակ տիրող ճգնաժամին, Համազգայինը ինչպէս նաեւ քոյր միութիւններ, այսօր աշխուժօրէն կը գործեն: Շրջանային Վարչութեան հետ հանդիպման ընթացքին ծանօթացանք ու քննարկեցինք յառաջիկայ ծրագիրները, զորս համագործակցաբար պիտի իրականացնենք: Արդ, Կեդրոնական Վարչութիւնը գիտակից ու նախանձախնդիր է աղետի մէջ գործող Լիբանանի եւ Սուրիոյ շրջաններուն գործունեութեան ո՛չ միայն պահպանման, այլեւ՝ զարգացման:

«Գ.»- Ինչպիսի՞ տպաւորութիւններով կը մեկնիք Հայլայէն:

Չ.Բ.- Հայլայը այնպիսի գաղութ մըն է, որ կառած է իր ստեղծած արժեքներուն, տէր է անոնց ու գիտակից, որ Սփիւռքի մայր գաղութն է: Երբ Շրջանային Վարչութեան ուղեկցութեամբ այցելեցինք Համազգայինի «Չաւարեան» մշակութային կեդրոն, մեր մէջ ամրացաւ այն տպաւորութիւնը, որ հակառակ բոլոր դժուարութիւններուն, Համազգայինը այստեղ հետամուտ է պահպանելու եւ զարգացնելու հայ մշակոյթը:

«Գ.»- Ամենուր կը խօսուի արեւմտահայերէնի նահանջին մասին, ինչ որ կը թելադրէ լուրջ աշխատանք մեր դպրոցներէն եւ միութիւններէն ներս: Համազգայինի Հայլայի Հայագիտական Հիմնարկը օրինակ մըն է արեւմտահայերէնի պահպանման կոչուած: Այս առումով Համազգայինի Կեդր. Վարչութիւնը ընդհանրապէս հայերէնագիտական աշխատանքի ու հայեցի մթնոլորտի պահպանման ինչպիսի՞ դաշտ ունի: Միւս կողմէ, Արցախի կորուստէլ մեր մշակոյթը լուսարձակի տակ պահելու ինչպիսի՞ կարելիութիւններ կ'օգտագործէ:

Չ.Բ.- Կեդրոնական Վարչութեան հովանաւորութեան ներքոյ կը գործեն երեք ճեմարաններ, որոնց կողքին կը գործէ «Վահէ Սէթեան» տպարանը, «Լիւսի Թիւթիւնեան» ցուցասրահը, կ'իրագործուին երիտասարդական ծրագիրներ ինչպէս Ֆորումը, Եւրոպայի Ուսանողական հաւաքը (Իւթիլքը-սը):

Հայերէն լեզուի եւ հայոց պատմութեան ուսուցիչներ պատրաստելու ծրագիր ալ ունինք: Անոնք, որոնք կը փափաքին մանկավարժութիւն կամ հայագիտութիւն ուսանիլ, Կեդրոնական Վարչութիւնը յանձն կ'առնէ անոնց կրթաթոշակն ու Հայաստանի մէջ կեցութեան ծախսը, պայմանաւ որ ուսանողը աւարտելէ ետք, որեւէ երկրի մէջ հայոց լեզու ուսուցանէ:

Արդէն ամիսէ մը ի վեր Հայաստանի եւ Արցախի գրասենեակներու հետ համագործակցաբար կ'աշխատինք Արցախէն տեղահան եղած մանուկներու ծրագրի մը իրականացման համար, որ կը միտի մեղմել անոնց հոգեկան ծանր վիճակը եւ օգնել անոնց արտադպրոցական պարտականութիւնները պատրաստելու ընթացքին: Ունինք հրատարակչական ծրագիրներ ինչպէս՝ մանկապատանեկան աշխարհէն «Լալան ու Արան», մտամարզը: Շուտով իր լրումին կը հասնի նաեւ մանկապարտեզի եւ նախակրթարանի գունագարդ դասագիրքերու պատրաստութեան աշխատանքը: Ընթացքի մէջ է նաեւ Դ. , Ե. եւ Չ. կարգերու յատուկ արդի հայոց պատմութեան գունագեղ դասագիրքերու պատրաստութեան աշխատանքը:

Որպէս հրատարակչական աշխատանք լոյս պիտի տեսնէ նաեւ գունագարդ, եռալեզու, եռահատոր Արցախեան մեր մշակութային կորուսեալ ժամանակութեան մասին գիրք մը: Ինչպէս նաեւ պիտի հրատարակուի Արցախեան բնութիւնն ու կեանքը պատկերող լուսանկարներու գիրքը:

Իսկ Արցախի տարածաշրջանի հայկական պատկանելիութիւնը հաստատող փաստաթուղթերը լոյս պիտի տեսնեն երեք հատորներով:

Մենք կը հաւատանք մեր ծրագիրներուն կարելիութեան եւ այժմեականութեան ու հակառակ տիրող դժուարութիւններուն, լծուած ենք զանոնք իրականացնելու արշաւին:

«Գ.»- Շնորհակալութիւն: Յաջողութիւն կը մաղթենք Համազգայինի գործունեութեան:

Հարցազրոյցը վարեց՝ Սեան Ազարիկեան-Պարմաքեան

Պրիմալկես

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՈՅԺԸ



Մարուշ Երամյան

Արդեն 21-րդ դարն է, բայց ոչ մեկ խօսք թե՛ ինչ է դերը բանաստեղծության, գոնե՛ գրականության, այս դարում:

Ինչո՞ւ անգլիատառ ամբողջ համացանցը լեցուած պիտի ըլլայ բազմահազար յօդուածներով, որոնք կը ներկայացնեն եւ կը քննարկեն այս հարցը, կը բանավիճին անոր շուրջ, բայց հայերէնով ո՛չ իսկ մեկ յօդուած, որ խօսի այդ մասին:

Ինչո՞ւ:

Տակաւին չկրցա՞նք համաձայնիլ անկախ Հայաստանի քաղաքակալութեան մասին, տակաւին չկրցա՞նք որոշել 21-րդ դարու մեր համահայկական նախընտրութիւնները, չկրցա՞նք համաձայնիլ մեծ, գլխաւոր եւ յոյժ կարեւոր ծրագիրի մը շուրջ ...



Պարզ է որ երբ այս բոլորը տակաւին առկա կը մնան, բանաստեղծութիւնը յետսակողմ կը մղուի եւ մեծ լռութիւն մը կը պարուրէ զայն, ինչպէս մշուշը Արարատին շուրջ:

Բանաստեղծութիւնը սակայն գաղտնի ոյժ մը ունի, մոգութիւն պիտի ըստի ...

Կ'ըսուի թէ, երբ հիւանդի մը համար Նարեկէն հատուածներ կարդացուին, այդ հիւանդը կը սկսի ապաքինիլ: Ասկա մեզի՝ հայերուս կը վերաբերի անշուշտ, եւ որոշ ժամանակի մը համար յաճախ կիրարկուած է: Մոգութի՞ւն: Այո՛, բառերուն մոգութիւնը, որովհետեւ բառերը իրենց շուրջ մագնիսական դաշտեր կը ստեղծեն: Արտասանուող բառերը, իրենց շուրջ ստեղծած մագնիսական խիստ դրական դաշտով կը մղեն, որ հիւանդը դէպի ապաքինում երթայ:

Նոյնիսկ այն պարագային, երբ Տատա շարժումին հետեւորդները, որպէս փորձարկում, տոպրակի մը մէջ թերթերէ կտրուած բառեր կը լեցնէին, յետոյ անցորդներէն կը խնդրէին բառ մը դուրս հանել տոպրակէն, եւ այդ հանուած բառերը կողք կողքի դնելով «բանաստեղծութիւն» կը շինէին, Նոյնիսկ այդ տեսակի անհետեւ միջոցներով «շինուած» բանաստեղծութիւնները իրենց հմայքը ունեցած են:

Ամերիկայի մէջ 1912-էն ի վեր լոյս կը տեսնէ Poetry magazine-ը, իսկ հայ իրականութեան մէջ ունեցած ենք երկու հանդէսներ միայն, որոնք ամբողջութեամբ նուիրուած են միայն բանաստեղծութեան:

Առաջինը «Ռուսաւորատուփ» խորագրուած աշակերտական գաղտնի հանդէս մը եղած է, 1900-ին ձեռագիր լոյս տեսած Էջմիածնի մէջ, եւ որուն խմբագիրներէն մէկը Սիմոն Վրացեան եղած է, երբ կ'աշակերտէր Գեորգեան ճեմարանին¹:

Երկրորդը՝ Հայկաի մէջ հրատարակուած «Բանաստեղծութիւն» պարբերագիրքն է, խմբագրութեամբ Իշխան Զիֆթեանի եւ Մ. Երամյանի: Հանդէսին երկրորդ թիւը առցանց լոյս տեսած է 2016-ին:

Անշուշտ առաջին հարցումը որ ինքզինք կը յիշեցնէ հետեւեալն է՝ «Բայց որո՞ւ համար, այս օրերուն ո՞վ բանաստեղծութիւն կը կարդայ», այո, մաւաւանդ որ ընդհանրապէս ընթերցող չկայ, կամ ընթերցողներուն թիւը խիստ նուազած է մեր իրականութեան մէջ:

Սակայն 1912-էն շարունակուող Poetry հանդէսը, ԱՄՆ-ի մէջ եւ ապա աշխարհի վրայ տարածուած «Բանաստեղծութեան Օր»-ը, թէ՛ հայերէն, թէ՛ տարբեր երկիրներու մէջ բազմաթիւ լեզուներով լոյս տեսնող բանաստեղծական գիրքերը կը հաստատեն, թէ մեր ենթադրածէն շատ անելի է բանաստեղծութիւն կարդացողներուն թիւը:

Բանաստեղծութիւնը ոյժ մը ունի, որ թերեւս շատերու համար զգալի չէ, կամ համոզիչ չէ: Բայց որպէսզի բանաստեղծութիւնը ազդեցութիւն ունենայ, պէտք է տարածուի:

Ինչպէ՞ս. Երբ աշխարհը պատերազմի հրդեհներէն բռնուած կը մրկի, վերջին մտահոգութիւնը բանաստեղծութիւնը պիտի ըլլար հաւանա-

բար: Այդպէս չէ սակայն: Պաղեստինեան պատերազմին այս օրերուն շատ շատեր պաղեստինցի բանաստեղծ Մահմուտ Տարուիշի քերթուածներէն առնուած տողեր, կամ ամբողջ քերթուածներ կը տեղադրէին իրենց ընկերային ցանցերու էջերուն, փորձելով արթնցնել մարդոց խիղճը, ընկերային անարդարութեան այս հսկայ ցուցադրութեան դիմաց:

Բանաստեղծութիւնը երբեմն մեզի կը յիշեցնէ մեր ... մարդ ըլլալը: Ամենէն քարսիրտ մարդն անգամ, երբ բանաստեղծութիւն մը լսէ (ոչ՝ մտիկ ընէ, լսէ առանց իր կամքին) պիտի յուզուի անպայմանօրէն, անշուշտ՝ ըստ բանաստեղծութեան:

Եւ անշուշտ՝ կը հարստացնէ լեզուն: Եթէ ուշադիր կարդանք մեր քերթուածները, այնտեղ այնքա՛ն նոր բառեր պիտի գտնենք, ինչպէս օրինակ Վեհանոյշ Թեքեանի բանաստեղծութեան պարագային, ուր կաթնափղր-փրուր, դեղնամշուշ, լուսացնցուղ եւ այլ նման նոր բառեր պիտի գտնենք: Միայն բանաստեղծ մը կրնայ նման բառեր ստեղծել, որոնք անելի ուշ տեղ կը գտնեն եւ ապրելու իրաւունք կը ստանան մեր գրականութեան մէջ:

Բանաստեղծութիւնը սակայն շա՛տ անելի կարեւոր դեր մը ունի, նոր սերունդին մէջ լեզուն արմատաւորելու որպէս միջոց:

Սփիւռքի մեր բոլոր դպրոցները, ո՛ր երկրին մէջ ալ գտնուին անոնք, իրենց աշակերտներուն արեւմտահայերէն Ե՛ արեւելահայերէն ոտանաւորներ (նախակրթարան) եւ քերթուածներ (միջնակարգ եւ երկրորդական) կը թելադրեն գոց սորվիլ: Այդ միջոցով աշակերտը կը հմտանայ արեւմտահայերէնին եւ կ'ընտելանայ արեւելահայերէնին:

Նոյնը չէ պարագան դժբախտաբար Հայաստանի դպրոցներուն պարագային, որովհետեւ այնտեղ հազուադէպօրէն արեւմտահայ քերթողութենէն նմոյշներ կը դասաւանդուին: Բացառութիւն է թերեւս Աւետիսեան դպրոցը, ուր գրագետ Յակոբ Միքայէլեան, ապա Նաեւ հալէպահայ ուսուցչուհի Ռիթա Կաղեան-Տիքալիքեան արեւմտահայերէն կը դասաւանդեն:

Բանաստեղծութիւնը, որ խտութեան արուեստն է, իր մէջ կրնայ խտացնել հեղինակին կենսափորձը, ինչպէս է պարագան Յովհաննէս Թումանեանի քառյակներուն, որոնք հակառակ իրենց սեղմ կառուցուածքին՝ ընդամենը չորս տողերու մէջ կրնան խորունկ կենսափորձ փոխանցել ընթերցողին:

Բերանն արնոտ Մարդակերը Էն անբան
Հագար դարում հազիւ դարձաւ Մարդասպան.
Ձեռքերն արնոտ գընում է Նա դեռ կամկար,
Ու հեռու է միւսէն Մարդը իր ճամբան:

Հէ՛յ ազահ մարդ, հէ՛յ անգոհ մարդ, միտքդ երկար, կեանքդ կարճ,
Քակի՛ քանիսն անցան քեզ պէս, քեզից առաջ, քո առաջ.
Ի՛նչ են տարել նըրանք կեանքից, թէ ի՛նչ տանես դու քեզ հետ,
Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրուան Էս ճամբդ:

Կամ Օմար Խայրամի քառյակները.

Ամէն ինչ գնում է, ամէն բան վաճառում,
Իսկ կեանքը մեր վրայ բացայայտ ծիծաղում:
Մենք, ճիշդ է, զայրանում, վրդովում ենք յաճախ,
Բայց, միեւնոյնն է, դեռ գնում ենք, վաճառում:

Բանաստեղծութիւնը շատ անելի հզօր կը դառնայ եւ տարածում կը գտնէ, երբ երգի վերածուի, որովհետեւ երգին մէջ երկու ոյժեր կը միանան՝ բանաստեղծութեան ոյժը եւ երաժշտութեան զօրութիւնը:

Ատար ամենէն վերջին եւ վառ օրինակը Թայլըր Սուիֆթի օրինակն է, երիտասարդուհի մը հազիւ 34 տարեկան, որ այս տարի դարձաւ ամերիկեան շատ նշանավոր Time հանդէսին «Տարուան Մարդը», պարզապէս իր ստեղծագործած եւ յօրինած երգերուն համար: Իր հռչակն ու տարածումը հասան հոն, որ Ամերիկայի համալսարաններէն մէկը կը ծրագրէ Սուիֆթի անունը կրող եւ իր արուեստը ներկայացնող-քննարկող նիւթ մը դասաւանդել: Այս որոշումին մէջ բացայայտօրէն կայ Նաեւ տնտեսական շարժիչը անշուշտ, որովհետեւ հազարաւոր երիտասարդներ պիտի ուզեն հետեւիլ այդ վճարովի դասապահերուն:

Բայց իրողութիւնը կը մնայ՝ երգը ունի իր մեծ ազդեցութիւնը ունկնդիրներուն վրայ:

Բանաստեղծութիւնը այլ զօրութիւն մը եւս ունի՝ ոտքի հանել ամբոխները, զանոնք ըմբոստութեան մղելով: Այս է պատճառը, որ աշխարհի բոլոր երկիրներուն մէջ, որքան ալ «ազատ» ըլլալ դաւանին անոնք, բանաստեղծները հետապնդումի ենթակայ են, յաճախ կը բանտարկուին, ու երբեմն Նաեւ սպանութեան կ'ենթարկուին, որովհետեւ սպառնալիք կը ներկայացնեն պետութիւններուն:

Հետեւաբար բանաստեղծութիւնը կը շարունակէ իր զօրութիւնը պահել եւ ազդեցութիւնը տարածել, թէւ այսօր, հակառակ անցնող դարերուն, մարդը չ'ընդունի այդ ազդեցութիւնը:

Որքան լաւ պիտի ըլլայ, եթէ գիտակցի՞նք բանաստեղծութեան ոյժին եւ զայն մեր առօրեային մէջ բերենք:

¹ «Հայ Պարբերական Մամուլի Նորայայտ Անուններ», Միհրան Մինասեան, Հայկազեան Հայագիտական Հանդէս, հատոր 9, Պէյրուք, 1981, էջ 295:

ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 133-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

ԿՈՐՈՎԻ ԿԱՄՔՈՎ
ԱՆԿՈՏՐՈՒՄ ՊԱՅՔԱՐ

Շողեր Աշրգեան

Աւանդութիւն է ամէն տարի նշել 1890-ին հիմնուած հայ Յեղափոխական Դաշնակցութեան հիմնադրութեան տարեդարձը, Դաշնակցութեան Օրը:

Այս տարի կուսակցութեան հիմնադրութեան 133-ամեակն է: Ամենուրեք հայրենասէր հայեր կը փութան ներկայ գտնուելու այս առիթով տեղի ունեցող ռզեկոյման ձեռնարկներուն՝ իրենց ներկայութեամբ հաստատելու իրենց սերն ու յարգանքը յորելեարին հանդէպ, իրենց վստահութիւնն ու հաւատարմութիւնը արտայայտելու անոր դաւանած ազգային սկզբունքներուն, նպատակներուն, աշխարհայեացքին:

Բայց մանաւանդ փաստը տալու իրենց դաշնակցութիւնը անոր հետ, որ ամրակուռ ու անխաղտ է 133 տարի: Որովհետեւ Դաշնակցութիւնը հայութեան հարազատ ծնունդն է. ծնունդ առաւ, որ վերջ դնէ անոր դարաւոր տառապանքին. մաքառեցաւ ու գոհաբերեց, որ հայրենիքը ազատագրէ, ազգին վիրաւորուած արժանապատուութիւնը վերականգնէ, անոր մարդկային ու ազգային կեդեցումին վերջ տայ. Առաջին համաշխարհային պատերազմի տարիներուն, երբ Յեղասպանութիւնը ընթացքի մէջ էր, կամաւորական խումբեր կազմեց, հերոսամարտեր մղեց. ապա Սարդարապատ կերտեց. Ազատ ու անկախ պետականութիւն հիմնեց, Սփիւռք կազմակերպեց ու Հայ Դատ հետապնդեց. Արցախի ազատագրութեան յառաջապահ մասնակիցը դարձաւ. հայկական Յեղասպանութեան միջազգայնացման ճամբուն վրայ նորօրեայ հերոսներ ու նահատակներ ունեցաւ, հսկայական ճիգ թափեց. Յեղասպանութեան ճանաչման գծով. միջազգային լռութեան վերջ տուաւ, որուն հետեւանքը եղաւ այն, որ բազմաթիւ պետութիւններ, եւ կամ անոնց խորհրդարաններ ճանչցան Հայկական Յեղասպանութիւնը: Տակաւի՛ն, Հայաստանի եւ Արցախի պետութիւնները հզօրացնելու քրտնաջան աշխատանք տարաւ:

Իր գաղափարախօսութեամբ ու բազմաբնոյթ գործունէութեամբ Դաշնակցութիւնը կերտեց հայ մարդու նոր տեսակ մը. խիզախ ու անվեհեր, անձնուէր ու գաղափարի տէր, պայքարող ու գոհաբերող, ազգի ու հայրենիքի շահը անձնականէն վեր դասող:

Առաւելապէս հայու այս տեսակն է Դաշնակցութեան թեւ ու թիկունք կանգնողը, կուսակցութեան ուժի յենարանը:

1890-էն ցայսօր, իր գոյութեան եւ գործունէութեան երկար ժամանակաշրջանին փոփոխութեան ենթարկուած է Դաշնակցութեան ծրագիրը, բայց անփոփոխ մնացած է անոր ազգային, յեղափոխական, ընկերակրական եւ ժողովրդավարական էութիւնը:

Դաշնակցութիւնը 133 տարի անընդմէջ ու անսակարկ կը շարունակէ գործել յանուն հայութեան քաղաքական դատին եւ Հայաստանի պետականութեան հզօրացման: Թիրիմացութեան մէջ են Հայաստանի մէջ անոր գործունէութիւնը «իշխանամետ» որակողները: Միտումնաւոր կերպով թէ միամտաբար այդպէս դատողներուն պէտք է բացատրել ու հասկնել, որ Դաշնակցութիւնը եապէս եւ գործնապէս պետականամետ եւ հայա-

մետ կուսակցութիւն է:

Իրեն համար ըսելու են, ըսին ու կ'ըսեն՝ իբրեւ թէ ան ընելիք չունի: Այդպէս ըսողները ինքնախաբեկանքի մէջ են:

Որովհետեւ Դաշնակցութիւնը կը շարունակէ գործել:



Ան ունեցէ՛ր Ե ընելիք, որ գոյատեւեր Ե աւելի քան 130 տարի, ունի ընելիք այսօր, երբ մռայլ է ազգային-քաղաքական կեանքը:

Կ'ունենա՛յ ընելիք ապագային ալ, այնքան ատեն որ չէ իրականացած հողահաւաքի եւ հայահաւաքի իր տեսլականը:

Արցախի անկախ պետութեան կորուստին ու հայաթափումին պատճառով այս տարուան Դաշնակցութեան Օրուան առիթով տեղի ունեցող ռզեկոյման ձեռնարկները հեռու են տօնական ըլլալէ, բայց ինչպէս միշտ գօտեպնդող են իրենց պատգամներով:

Արցախի գծով Հայաստանի ներկայ իշխանութիւնները սխալ քաղաքականութիւն վարեցին: Հայաստանի ընդդիմադիր շարժումին մէջ յառաջապահ դիրքէն Դաշնակցութիւնը իր «ոչ»-ը արտայայտեց գործնապէս եւ ուժգնօրէն: Սակայն իշխանութիւնները ականջալուր չեղան: Արցախէն ետք երբ թըշնամին կը ծրագրէ Հայաստանը կլանել ու թըրքացնել, երբ կը սպառնայ անոր ազատ ու անկախ գոյութեան ու տարածքային ամբողջականութեան՝ վիստելու փոխարէն պէտք է արիանալ, միահամուռ բռունցք դառնալ:

Իսկ ո՞վ պիտի չուզէ զօրավիգ կանգնիլ Դաշնակցութեան, ազգի եւ հայրենիքի դժուարագոյն, ճգնաժամային կացութեան ներկայ հանգրուանին: Հայ ժողովուրդը իր լաւագոյն գաւակները տուած է այս կուսակցութեան մանաւանդ ազգի ու հայրենիքի ամենէն դժնդակ ու ճակատագրական ժամանակներուն:

Կա՞յ հայ, որ դէմ ըլլայ Դաշնակցութեան ազգային, քաղաքական, ընկերային առաջադրանքներուն:

Իրեն եկած են ու կու գան հայ հարուստն ու աղքատը, մշակն ու մտաւորականը, գրագետն ու գիտնականը, բարձրաստիճան գիտնորականն ու հոգեւորականը, Հայ կինն ու պարմանուհին: Կա՞յ ասկէ աւելի համոզիչ փաստ, որ ան հայ ժողովուրդի բազմախառն հատուածներուն կուսակցութիւնն է:

Աշխատաւոր Հայը հաւատացեր է անոր գաղափարին, որովհետեւ ան աշխատանքի դատի պաշտպան կուսակցութիւնն է:

Ազգասէր հայը, մանաւանդ Սփիւռքի տարածքին, վստահեր է անոր, որովհետեւ հաստատ համոզումը ունեցեր է, որ գայն իր կողքին պիտի գտնէ ամէն անգամ որ անպահովութիւն տիրէ իր շուրջ, եւ քաղաքա-

կան կեանքը փոթորկի անորոշ ելեւէջներով:

Դժբախտաբար, ազգային ներկայ օրերը գեղեցիկ չեն նաեւ ներազգային ճակատի վրայ՝ նոյնպէս Հայաստանի Հանրապետութեան ներկայ իշխանութիւններուն վարած անհեռաւոր քաղաքականութեան պատճառով: Լրջօրէն խաթարուած եւ խեղաթիրուած կը ներկայանայ Սփիւռք-Հայաստան ներդաշնակ ու հաւասարակշիռ համագործակցութեան պատկերացումը, որուն հետեւանքով ճեղք տուած է համազգային միասնականութիւնը, որ անհրաժեշտ է աւելի քան երբեք:

Ներկայիս հակադիր երկու քաղաքական ուղղութիւններ կը տիրեն հայութեան մէջ: Պարտուողականութեան ու պայքարի գիծերը չէ՛ն կրնար գուգահեռ ընթանալ: Պարտուողական, կեղծ խաղաղասիրական գիծը կորուստ ու կործանում կը բերէ, իսկ պայքարի ճամբան, ուշ կամ կանուխ, կ'աւարտի յաղթանակով:

Եկէ՛ք մերժեցէք պարտուողականութիւնը, միասնաբար պայքարի ճակատին՝ որ յաղթանակ ապահովեց մեր ազգին, վերադարձնեց Արցախը, առաջ տանինք հայկական պահանջատիրութիւնն ու Հայ Դատը: Դաշնակցութիւնը շեղողը չէ իր նպատակէն, հրաժարողը չէ իր գաղափարախօսութենէն:

Ազգային գերիսնդիրներու գծով յուսահատութիւնն ու անտարբերութիւնը, որքան ալ համայնական համատարած երեւոյթ ըլլան, Դաշնակցութեանը չեն: Որովհետեւ ան պարտութեան հետ չի՛ հաշտուիր, կը հաւատայ յարատեւ պայքարին ու անոր յաղթանակին: Իսկ յարատեւ պայքարողը չի՛ յուսահատիր, նպատակասլացը չի՛ յոգնիր պայքարել: Այսպիսին է Դաշնակցութիւնը՝ հայ ժողովուրդին ասպետութիւնը:

Ան հրաժարողը չէ մանաւանդ Հայրենիքի ամբողջական Միացեալ Հայաստանի իր տեսլականէն, որ օր պիտի գայ ու պիտի իրականանայ: Անոր այս տեսլականը՝ ոմանց համար կրնայ երազատեսական, ոմանց համար անիրատեսական թուիլ, բայց ամէն հայու հոգիին մէջ ծուարած է այդ նպատակը, այլապէս Դաշնակցութիւնը, հարազատ արտայայտիչը ըլլալով հայ մարդու հոգիին ազգային ամենէն վեհ իղձերուն, հայ ժողովուրդին անհարազատ տենչանքներ չի փայփայեր, զանոնք իր ծրագրին մաս չի դարձներ երբեք:

Եւ Դաշնակցութեան ճամբան յետդարձ չի ճանչնար, կ'ընթանայ յառաջ երբ մանաւանդ հայութեան գիտակից ու հայրենասէր հատուածը անոր թեւ ու թիկունք է:

Արդ անոր հետ՝ չվախնանք մարտի ելլելէ, չերկնչինք թշնամիէն, չվիատինք ի տես հայութեան հանդէպ աշխարհի անարդարութեան, միջազգային հանրութեան քար անտարբերութեան:

Թեւ անընդունելի, բայց իրականութիւն է որ պետութիւնները կը գործեն շահադէտ հաշիւներով:

Միայն իր սեփական ուժին հաւատացող կրնայ աննկուն մնալ, եւ անվախ, այլ գիտակից կուրծք պարգել մարտահրաւերներուն:

Ձեռք ձեռքի տանք, համախմբուինք Դաշնակցութեան գաղափարներուն եւ գործին շուրջ, մէ՛րը ընենք անոր հայրենակերտման ու ազգային ամբողջականութեան գաղափարները, որ յաղթանակէ հայը, գոյատեւէ Հայրենի պետականութիւնը, հզօրանայ ու բարգաւաճի հայ ազգը:

Դաշնակցութեան պատգամը իր 133-րդ ամեակին առիթով մէկն է. Ո՛վ հայ ժողովուրդ, քու միակ փրկութիւնը քու հաւաքական ուժին մէջ է:

«ՄԱՄԷԻ ՎԻՉԱՆ»

«Աղամեան» թատերախումբի դերասաններով հաւաքուած ենք եւ կը նշենք այս տարուան ներկայացման յաղթական ելոյթը: Ըստ սովորութեան կենացներ կը խմենք եւ կը յիշենք հետաքրքրական անցուդարձեր, որոնք կը պատահին քուլիսները եւ բեմին վրայ: Երբ հինին մասին խօսք ըրինք, մտաբերեցինք անցեալ տարուան ներկայացման մեր թողթակցութիւնը, որուն մէջ յիշած էինք թիւեր: Վստահաբար դուք ալ կ'ուզէք գիտնալ այդ թիւերուն արձանագրած գարգացումները: Ուրեմն, 2023 Նոյեմբեր 26-ի «Մամէի Վիչան» թատերախաղը «Աղամեան»-ի

միմիանց հանդէպ տածած սերն ու յարգանքը ամրապնդող ընտանիքներ: Ներկայացումը կը նկարագրէր կեանքը ինչպէս որ է: Ներկայացումը այնքան այժմեական էր, որ երբեմն-երբեմն շփոթութեան կը մատնէր հանդիսատեսը. արդեօ՞ք բեմին վրայ գտնուողները դերասան են, թէ՞ ամերիկեան «Րիլզ» ծրագրի մը մասնակիցներ:

Արհեստաւոր Գալուստը, որուն կերպարը դերասանական մեծ հրմտութեամբ ներկայացուց ճորճ Դաւիթեան, պիտի ձգէ իր շուկայի բարեկամները, առաւօտեան ֆուլի պնակը ու երթայ Բանատա: Տիկի-



630-րդ վարագոյրն է: Ան թատերախումբին 99-րդ ներկայացումն է: Այս թիւերը պատահական սոսկ թիւեր չեն, այլ մեր գաղութի գոյութեան վկայութիւններն են:

Մշակոյթի գործիչներու ս հոգիները երջանկութեամբ մը կը պարուրուին ամէն անգամ, երբ ականատես կ'ըլլանք թատերական ներկայացման մը յայտարարութեան, երգչախումբի մը տարեկան ելոյթի յայտարարութեան, միաժամանակ ցաւը եւ մտահոգութիւնը կը ճմլէ մեր սիրտերը, երբ կը տեսնենք այդ ելոյթներու ընթացքին հանդիսատեսի թիւին նօսրացումը:

Իսկ ինչի մասին կը խօսի ու կը մտահոգուի հալեպահայը լրիւ այլ բան է: Ուր կ'երթաս ա կանաչալուր կը դառնաս մէկ թեմայի: Բոլորը կը խօսին Բանատա երթալու մասին: Վերջապէս ինչ ընէ անգորութեան մատնուած մարդը, որ կը ձգտի աւելի լաւ պայմաններ ստեղծել իր ընտանիքին: Մոլորուած ամբոխներ են կարծես ու բոլորը միաբերան կը հաւատան, թէ փրկութեան ելքը «հոն» է:

Համատարած այս տիրող մըթնոլորտին մէջ «Աղամեան» թատերախումբը եկաւ հալեպահայ հանդիսատեսին հրաձգելու Վաչէ Ատրուկի «Մամէի Վիչան» թատերախաղը: Այս օրերուս իսկապէս ուրիշ ոչ մէկ թեմա այսքան հոգեհարազատ կրնար ըլլալ: Մէկ ու կէս ժամուան ընթացքին հանդիսատեսը կլանուած կը դիտէր իր կեանքին պատմութիւնը:

Բեմին վրայ ներկայացուածը իսկական տրամա մըն էր: Պատկեր մը առնուած դէպքանատան սպասման սենեակէն: Տեղ մը, ուր կրնաս տեսնել անեացած երագանքներ, քանդուած սերեր, միաժամանակ

նը՝ Շաղիկ Տաղեան-Պարսումեան կը յորդորէ ամուսինը գուսա ըլլալ քանատական դէսպանատան մէջ: Զէ՞ որ հոն Գալուստին ճանչցած եւ հասկցած շուկայի միջավայրը չէ:

Մարտիրոս Նահատակեան, որուն դերը խաղցաւ Արմէն Սթանպուլեան, կ'ուզէ ընտանեօք գաղթել ու իր հետ տանիլ Նաեւ իր մայրը: Բայց ինչ-իչ պատճառներով անոր վիզա չեն ուզեր տալ: Մարդկային պատկեր մը, որ կը մարմնաւորէ հալեպահայ շատ մը ընտանիքներու մէջ պատահած դէպքեր: Որքան ծերեր առանձին մնացին, որովհետեւ չուզեցին ձգել իրենց տունը կամ աւելի ցաւալին գաւակները չուզեցին իրենց հետ տակիլ գանտը ու լաւագոյնս համարեցին ծերանոց մը տեղադրել գիրենք: Սամուէլը՝ Հրակ Ֆերմանեան, ժամանակակից շատ մը երիտասարդներու նման ամէն գնով կ'ուզէ երագանքներու երկիր հասնիլ:

Ճանիկը՝ Արթիւր Շեօհմէլեան, բացասական կերպար մըն է: Ցաօք իր նմանները միշտ ալ կան եւ պիտի ըլլան: Մարդիկ, որոնք կորսնցուցած իրենց սիրտն ու խիղճը ունին մէկ խտելի՝ դրամը եւ յանուն իրենց շահին անմարդկային սառնասրտութեամբ մը կը շահագործեն իւրաքանչիւր մարդկային վիճակ:

Դեսպանատան աշխատողները, յանձինս՝ Ռաֆֆի Գալայճեանի, Նանոր Ֆերմանեանի, Յովիկ Զէշիշեանի եւ Կարօ Արոյեանի, պարտաւորուած են ե՛ւ յարգել իրենց երկրի կամ աւելի ճիշդ կ'ըլլայ ըսել համակարգիչի մեքենայացուած ոչ մարդկային ընտրութիւնը ու միաժամանակ ըլլալ մարդկային:

Եւ վերջապէս ներկայացնենք

ՄԵՆՔ ԱՆԿԵՂԾ ԶԻՆՈՒՈՐ ԵՆՔ

(ԶՅԴ 133-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

Արամ Աւագեան

«Մենք Անկեղծ զինուոր ենք առանց ի վիճակ, Ուխտել ենք ծառայել երկար ժամանակ»:

Մենք՝ հայ ազգին պատկանող գաւակներս, ազգին ի խնդիր խորհող եւ գործող դաշնակցականներս, անկեղծ զինուորներ ենք, առանց անձնական շահ փնտռելու, կամ փառք որոնելու, ազգին գերնպատակներուն հաստատումի ճամբուն վրայ պայքարող, մաքառող, նոյնիսկ մեր կեանքին գնով կռուողներ ենք:

«Առանց ի վիճակ» կը նշանակէ որ ազգին համար մեր պայքարի միջոցները ընտրած ենք իբր մեր կամքին արտայայտութիւնը: Մեր քաղաքական արեւելումը հիմնուած է ազգին եւ հայրենիքին շահերուն վրայ:

«Ուխտել ենք ծառայել երկար ժամանակ»։ մեր պայքարի ընթացքը կապուած չէ ժամանակի հետ, նաեւ մատուցուած չէ նիւթական ակնկալութեամբ, ճիշդ անոր համար ծառայութիւնն է մեր նպատակը՝ երկար ժամանակի վրայ փռուած անփոխադարձ ծառայութիւնը: Այստեղ կը կայանայ, աւելին՝ կը պայծառանայ մեր պայքարի անկեղծութեան իմաստը:

«Ծառայել երկար ժամանակ» հասկացութիւնը կը մարմնաւորուի տարբեր պատկերներով:

Երբ ազգային գարթօնք կար՝ մենք անոր ատաղձն էինք: Երբ հայկական նահանգներուն մէջ ընկերային, տնտեսական բարեկրող գործուն հարց կար՝ մենք անոր համար պայքարը հրահրողներն էինք:



Երբ թրքական չարիքը կը ծանրանար հայ մարդուն ինչքին եւ հոգիին վրայ՝ ազատագրական եւ ինքնապաշտպանական պայքարի կազմակերպիչներն ու գործադրողներն էինք:

Երբ ցարական բռնակալութիւնը կը տորրէր ազգային եւ եկեղեցապատկան կալուածները՝ մենք անոր յախուռն հակադարձողներն էինք:

Երբ Տեղասպանութիւն, կոտորած կար՝ մենք անոր առաջին գոհերն էինք:

Երբ հայրենակերտման հարց կար՝ մենք անոր հիմքերը հաստատողներն էինք:

Երբ Հայոց Ցեղասպանութեան թէ՛ թրքական, թէ՛ միջազգային ուրացում կար՝ մեր ընտրեալները իրենց արիւնով միջազգային ուշադրութեան արժանացուցին զայն:

Երբ Արցախի ինքնորոշման հարց կար՝ մենք անոր պայքարին մասնակցողներն էինք, հայրենի կոչին արձագանգողներն էինք:

Երբ Լիբանանի թէ՛ Սուրիոյ մէջ հայ ազգի ֆիզիքական գոյութիւնը վտանգուած էր՝ մենք անոր ապահովման ինքնագոհերն էինք:

Երբ վերանկախացման հարց կար՝ դէպի երկիր կոչ ուղղողներն էինք:

Այս ամբողջն ենք մենք, տակաւին պարտութեան ժամանակ, առանց յուսահատելու, առանց վարդազոյն արշալոյսին ճաճանչի իրողութիւնը տեսնելու, սակայն անոր տրամաբանական եւ շարունակուող ընթացքը ոյժի մէջ պահելու պարտաւորութեամբ նաեւ գոհունակ աշխատանքով բաւարարողներն ենք, կը մնանք այդպէս երկար, շատ երկար ժամանակ:

Այժմ երբ ազգային արժեքներուն դէմ ստուերներ ցցելու հարց կայ՝ մենք դիմադրողներն ենք, ազգը եւ իր արժեքները պաշտպանողներն ենք, այս տագնապալի պայքարին մէջ առաջին գիծին կանգնողներն ենք:

Ու դեռ գալիք հարցերուն եւ անակնկալներուն դէմ ծառայողներն ենք՝ անյայտ ժամկետի, կատարած մեր ուխտին՝ համապատասխան եւ համագործ:

Սերոբը՝ ճորճ Համամեանն ու իր կինը Սալբին՝ Սերլի Գուգուեանը: Կինը քանատացի է ու երբ նժարին կը դնէ երկրի վիճակը ու մեկնելու իր ունեցած հնարաւորութիւնները, կշիռը կը գերադասէ երթալու կողմը: Սակայն ամուսինը չ'ուզէր երթալ: Երիտասարդ գոյգին միջեւ ստեղծուած տարակարծութիւնը դեռնոր կազմուած ընտանեկան բոյնը կը քանդէ:

Իր 99-րդ ներկայացումով ՀԵ

Ընկերակցութեան «Աղամեան» թատերախումբը քայլ մըն ալ մօտեցաւ հարիւր թիւին: Թղթակցութեան աւարտին լաւագոյնս կը սեպեմ շնորհաւորել թատրոնի նուիրեալները: Վարձքերնիդ կատար: Ընտրակալութիւն այն ոյժին եւ կորովին, գորս կը վայելէք:

Ձեր երթը դէպի հարիւրերորդ ներկայացում թող հարթ եւ դալար ըլլայ...

Երան Չէթունցեան

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

- Խոյ**
Փոքր տագնապ մը ետք ի վերջոյ ձեր արեւը պիտի շողայ: Կեանքի փայլուն հանգրուան մը պիտի թեւակոխէք ու հանգստանաք:
- Ցուլ**
Երկարատեւ աշխատանքները ձեր մարմինը տկարացուցած են: Ձեր առողջութեան հոգ պետք է տակիք: Չգաստացէ՛ք:
- Երկուորեակ**
Անլուծելի կարծուած խնդիրները վերջապէս պիտի լուծուին: Ձեր հոգեկան խաղաղութիւնը պիտի վերադառնայ եւ դուք պիտի ուրախանաք:
- Խեցգետին**
Մտիկ բարեկամ մը մեծ նուէր մը պիտի ստանաք այս շաբաթ: Սիրալիր վերաբերմունք ցուցաբերեցէ՛ք բոլորին հանդէպ:
- Առիւծ**
Յեռաւոր երկրէ հարազատի մը այցելութիւնը խանդավառութեամբ պիտի լեցնէ ձեր հոգին: Սիրով ու ջերմութեամբ պիտի լեցուի ձեր տունը: Երջանկացէ՛ք:
- Կոյս**
Ձեր յուսահատութիւնը իր գազաթանկէտին հասած է: Բարեկամներու աջակցութիւնը պիտի խրախուսէ ձեզ: Բաջասիրտ եղէ՛ք:
- Կշիռք**
Սրտի անհուն գոհունակութեամբ պիտի լիցքաւորուիք: Ձեր կատարած բոլոր բարի գործերուն պտուղը պիտի վայելէք:
- Կարիճ**
Կեանքի դժուարին պայմանները թող չընկճեն ձեզ: Բարեսրտութեամբ վարուեցէ՛ք ձեր ընտանիքի անդամներուն հետ:
- Աղեղնաւոր**
Նոր գործի մը առաջարկը երկմտութիւն մը պիտի պատճառէ ձեզի: Ձեր գործը յաջողակ պիտի ըլլայ: Մի՛ մտահոգուիք:
- Այծեղջիւր**
Մանր-մունր հոգերով ծանրաբեռնուած է ձեր հոգին: Քիչ մըն ալ ձեր առողջութեան հոգ տարէ՛ք: Երկրորդական խնդիրները անտեսեցէ՛ք:
- Ջրիս**
Բարի լուր մը պիտի ստանաք այս շաբաթ: Ձեր սիրելիները ձեզ մով պիտի հետաքրքրուին եւ ձեր յիշատակները պիտի վերակենդանանան:
- Ձուկ**
Բարեպիտու ու աշխատասեր էք: Ձեր շուրջիններուն գովասանքին պիտի արժանանաք: Ուրախ լուր մըն ալ պիտի ոգեւորէ ձեզ:



ԱՄԱՆՈՐԻ ԳԻՇԵՐԸ ԻՆՉ ԳՈՅՆ ՉԳԵՍ ՅԱԳՆԻԼ

Խորքին մէջ այդ օրուան համար մենք պետք է նախ ընտրենք կենդանութիւն հաղորդող եւ հանգիստ գոյներ, ուստի կանաչը նպատակաւորաբար է:

Կանաչը դրական ազդեցութիւն ունի մեր հոգեվիճակին վրայ:

Միւս կողմէ 2024-ը կանաչ վիշապի տարի է:

Կանաչ գոյնը առնչուած է բնութեան հետ, կենսունակութեան ալիք կը հաղորդէ: Անոնք, որոնք կ'ընտրեն կանաչը, սովորաբար լաւատես եւ ընկերասեր մարդիկ են:

Կանաչը դեղին եւ կապոյտ գոյներու խառնուրդն է: Ան կը ներառէ երկու հիմնական գոյներու լաւագոյն յատկութիւնները. դեղինէն՝ պարզութիւն եւ լաւատեսութիւն, իսկ կապոյտէն՝ յատուկ հմայք: Կանաչը ֆիզիքական ազդեցութիւն ունի մեր մարմինին վրայ, ան կը հանգըստացնէ մեր ջիղերուն արկուածութիւնը:

Աշխարհի մէջ կանաչը տարբեր բաներ կը խորհրդանշէ:

Կանաչը՝ յաւերժական կեանք կը խորհրդանշէ ճարտի մէջ:

Կանաչը կապուած է աճի եւ նորացման հետ: Կանաչը կ'օգնէ վերականգնելու եւ երիտասարդ դառնալու:

Եթէ Ամանորի օրը յոգնած եւ ուժասպառ եք, անհրաժեշտ է որ վառ կանաչ հագնիք, որպէսզի գործունէայ եւ եռանդուն դառնաք: Կանաչը մեր տրամադրութիւնները կը բարձրացնէ:

Ան ունի բազմաթիւ երանգներ՝ անանուխի կանաչ, բաց կանաչ, բուսական կանաչ, գմրուխտի կանաչ: Այս բոլորը հիմնական ձեւով կը համադրուին հիմնական գոյներու՝ սեւին, ճերմակին եւ շաքարագոյնին հետ:

Կանաչը գրաւիչ տեսք ունի նաեւ մոխրագոյնին հետ, որ այս տարուան ամենէն նորոյթ գոյնն է: Կրկնաչ կանաչ շապիկ հագնիլ, մոխրագոյն փէշով:

Եթէ կը փափաքիք աւելի պայծառ եւ գրաւիչ ըլլալ, կրնաք կանաչը համադրել դեղինին կամ նարնջագոյնին հետ: Նման գոյները տոնական տրամադրութիւնը աւելի կը բարձրացնեն եւ աւելի եռանդ կու տան մեզի:

Կանաչին երանգները կարելի է համադրել նուրբ երկնագոյնին եւ կապոյտին հետ: Ամենապարզ եւ ամենայաջող օրինակը կանաչ բաճկոնն է՝ կապոյտ տաբատի մը հետ:

Կանաչը ձեզի կը վայելէ՞...


Կանաչը ընդհանրապէս կը վայելէ կարմիր մազերով կանանց:

Այնուհանդերձ, կանաչին կրնան օգտագործել շէկ, թուխ եւ շագանակագոյն մազեր ունեցող կանայք:

Ոճաբանները խորհուրդ կու տան որ կինը ձմեռային եւ ամառային իրենց հագուստներուն ընտրութեան մէջ բաց գոյները նախընտրեն, իսկ գարնան եւ աշնան՝ աւելի մուգ գոյները:

Իրականութեան մէջ դասական կանաչը կը համապատասխանէ բոլորին:

Եթէ կանաչը ընտրենք, յաջողութեան ձգտող մարդիկ ենք: Կանաչը բարիի եւ սիրոյ գոյնն է:





Ռաֆֆի Սիկանյան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ

- Սուրիոյ պասքեթի տղոց խումբի Բ. դասակարգի փայտեանութեան, ՅՄԸՄ-ի կազմը հերթական երկրորդ յաղթանակը արձանագրելով Համայն մէջ 75 - 64 արդիւնքով պարտութեան մատուցեց Թալիսան: Աւելցնենք, որ ՅՄԸՄ իր առաջին յաղթանակը արձանագրեց Յղթթինին դէմ, կանոնագրային կարգով 20 - 0 արդիւնքով՝ մրցակից կազմին բացակայ ըլլալուն համար: Նոյն խմբակէն ՀԵԸ-ի խումբը Լաթաքիոյ մէջ պարտութեան մատուցաւ Յղթթինէն 87 - 90 արդիւնքով:



- Սուրիոյ պասքեթի Ա. դասակարգի փայտեանութեան, ՅՄԸՄ-ի աղջկանց խումբը արձանագրեց գոյգ պարտութիւններ: Առաջինը եղաւ Նախկին տարուան փայտեան Սաուրայէն 67 - 34 արդիւնքով, իսկ երկրորդը դարձեալ Դամասկոսի մէջ՝ Պարատայէն 54 - 47 արդիւնքով:

ՀԱՅԿԱԿԱՆ

ՏԻԳՐԱՆ ՅՈՎԱՆԵՓԵԱՆ՝ ԲՈՆՏԵԱՄԱՐՏԻ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ ԱՖՈՅԵԱՆ

Երեւանի «Միկա» մարզադահլիճին մէջ ընթացող բռնցքամարտի աւագ տարիքի պատանիներու աշխարհի առաջնութեան եզրափակիչ վերջին մարտերը տեղի ունեցան: Առաջին երեքին հանդէս եկան Հայաստանի պատուիրակները: Տղոց 46 քկ. ծանրութեան կարգին Աննո Դարչինեան պարտուեցաւ ռուս Իսլամ Մագոմեդովի դէմ՝ գրաւելով 2-րդ տեղը: Աղջկանց 48 քկ. ծանրութեան կարգին Հեղինէ Պետրոսեան յաղթեց հնդկ Պայալ Պայալին: Տղոց 50 քկ. ծանրութեան կարգի հայ բռնցքամարտիկ Տիգրան Յովսէփեանը 5:0 արդիւնքով յաղթեց պուլկարացի Անկէլ Եանկով Տիմիթովին եւ ճանչցուեցաւ Եւրոպայի փայտեան:



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ԿՈՒՐՏԻՈՒՆ ԶԱՅՏԱՐԱՐԵՑ ՀԱԼԱՆՏԻ ՎՆԱՍՈՒՄՔԵՐԻՆ ՄԱՍԻՆ

Մանչեսթըր Սիթիի գլխաւոր մարզիչ Պեպ Կուարտիլիան խօսեցաւ խումբի յարձակող Էրլինկ Հալանտի՝ Փրեմիեր լիգի 16-րդ փուլի «Լուտօնի» խաղի յայտացուցակէն դուրս մնալու մասին: «Ան ոտքի ոսկորի ցաւ ունի: Անտոն Վիլլայի դէմ խաղէն ետք, որ աւարտեցաւ 1 - 0 արդիւնքով, ուժեղ ցաւ զգաց, եւ այդ պատճառով հնարաւոր չեղաւ անոր մասնակցութիւնը այս խաղին», ըսաւ սպանացի մասնագէտը: «Էրլինկ անզիական ակումբ տեղափոխուելէն ետք դարձաւ շատ կարեւոր խաղացող: Բայց քանի որ մրցաշրջանը զարգանալու մէջ է, մենք նման իրավիճակներէն պէտք է խուսափինք՝ վնասուածքներ, որակազրկումներ եւ այլ խնդիրներ: Մենք պէտք է համակերպինք», Կուարտիլիան խօսքերը մեջբերեց BBC-ն: Այս մրցաշրջանին 23-ամեայ նորվեկիացի բոլոր մրցաշարերուն ընթացքին մաս կազմած Է 22 հանդիպումի, դարձած՝ 19 կոլի եւ 5 կոլային փոխանցման հեղինակ:



ԽԱԶԲԱՌ (ՄԽ 468)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

Հորիզոնական

- «Բարի Արագիլ» երգի բառերուն հեղինակը: Ժխտական Նախաձանց:
 - Հակառակ՝ տարածքի միաւոր: Հակառակ՝ յարաբերական դերանուն:
- Յետոյ:
- Այն քաղաքը, ուր կը գտնուի Լաստի Խուօ բլուրը: Տառի մը հարեանները:
 - Թունաւոր օձ մը: Աստղերու խումբ: Չայնաւոր տառեր:
 - Ժողովրդային ասացուածքը կ'ըսէ. «Պարտքը տալով, մեղքը»: Օտարոտի:
 - Փոխադրամիջոց մը: Հակառակ՝ 6007:
 - Հակառակ՝ լեզուով մը «այո»: Իմացական կարողութիւն: Հակառակ՝ տարի:
 - Խօսքի բաղկացուցիչ մաս: Լճացած ջուրէ կազմուած ցեխուտ:
 - Ճեղք, ծերպ: Լեցուն:
 - Կրկին: Ճանկաւոր երկաթ, գործովուն յատակը կ'իջեցնեն:
 - Մկրտարան:
 - Բայական լծորդութիւն: «Ժայռ» կոչուած առաքեալը:

Ուղղահայեաց

- Ոստանիկ Ատոյեանի ծածկանունը՝ Կորքի: Իրերայաջորդ տառեր: Լեւոն Շանթի թատերախաղը. «..... Մարդը»:
- Տառի մը անունը: Համաճարակ հիւանդութիւն մը:
- Չայնաւոր: Նմանաձայն տառեր:
- Չայնաւոր: Յաւի ճիչ:
- Գուրգուրանք: Հակառակ՝ թռչուններու խումբ:
- Հակառակ՝ տառի մը անունը: «Երեւան-Երեւոնի» երգի երած շտուրեան հեղինակին անունը:
- Խոյանք: Արական կոչական բառ:
- Հակառակ՝ Հինգշաբթի: Հակառակ՝ իրանի այն մասը, ուրկէ բազուկը կը կախուի:
- Մտապատկեր: «Չարթօնք» հատորի հեղինակը:
- Սարսափ:
- Ահարոնեանի «Ազատութեան ճանապարհին» գիրքի պատմուածքներէն: Բայական լծորդութիւն: Եւս:
- Փորել հանել: Դիակէ մնացած մոխիր:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 467)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	կ	ն	դ	է	մ	բ	ե	ր	ն	ա	հ	
2	տ	ա	ր	բ	ի	լ	ն	ր	ա			
3	ա	ւ	օ	ա	լ	ք			ս	ա	ր	
4	կ		դ	ի	ք	ա	տ	ք				
5		ք	ր	ի	ս	ա	փ	ն	ք			
6	պ	ն	օ		ն	ւ	մ	է	ր			
7	ա	կ	մ	շ	ք	հ	ա	պ	ն	է		
8	տ		ա		տ	ր	ն	ն				
9	է	ա	կ	ն	է	ր	է	ւ		լ	ա	
10	հ	ա	ւ	ն	է	ա	ր	ա	կ			
11	մ	ա	ր	տ	ն	ւ	ն	կ	ա			
12	ս	ի		ա	յ	ն	կ	ն				

ԼՈՒՐԵՐ

Երկուշաբթի 18/12 4° 14°	Երեքշաբթի 19/12 4° 14°	Չորեքշաբթի 20/12 4° 14°	Հինգշաբթի 21/12 5° 14°	Ուրբաթ 22/12 6° 14°	Շաբաթ 23/12 6° 13°	Կիրակի 24/12 4° 14°
---	--	---	--	---	--	---



ՀԱԼԵՂԱՅՈՒԹԻՒՆ...

Սկիզբ՝ էջ 1

ներն ու պատգամները, ապա նաեւ Արցախի բռնագրաւումն ու գերիները, որոնց կարգին Արցախի Ազգային ժողովի նախագահ, ՀՀ Բիւրոյի անդամ Դաւիթ Իշխանեանը, որ յանձնառութեամբ ստանձնեց իր պաշտօնը՝ քաջ իմաստալոյ պայքարի իր ճամբուն յառաջացող վտանգը, ապա գերեզարուեցաւ քաղաքական այլ դէմքերու հետ միասին Ատրպէյճանի կողմէ:

Գեղարուեստական յայտագիրը շարունակուեցաւ: Այսպէս՝ Անի Պօղիկեան (դաշնամուր), Նայիրի Նազգաշեան-Մինասեան (կողմնասարինգ), Նուազեցին «Ազատ Հայաստան»-ը, Ռուզան Պարսումեան (դաշնամուրի) Լիլա Սահակեան (ջութակ) Նուազեցին «Իմ Հայրենիք»-ը, իսկ Վիգէն Զաղլասեան եւ Աննա Պարսումեան ասմունքեցին Վահագն Դաւիթեանի «Չարկ, Իմ Չարմանալիդ» քերթուածը: Յատկանշական էին երաժշտական կտորներու եւ քերթուածին ընտրութիւնները, տպաւորիչ էին կատարողները՝ իրենց որակաւոր ելոյթներով:

Այնուհետեւ հանդիսավարներ՝ Ծերուն Գահուէճեան եւ Մարմանդ Գեւոյեան ընթերցեցին այս առիթով յղուած Սոցեալ Դեմոկրատ Հնչակեան եւ Ռամկավար Ազատական

կուսակցութեանց խօսքերը (Այս առիթով յղուած բոլոր խօսքերը լոյս պիտի տեսնեն «Գանձասար»-ի Դեկտեմբեր Գ. համարին մէջ:

Օրուան բանախօսն էր ազգային գործիչ, հրապարակախօս Տիգրան Ճինպաշեան: Բանախօսը յայտնեց, որ տարեկան այս հաշուետուութեան առիթով, հայ ժողովուրդին ու հայոց հայրենիքին ծառայութեան համար կատարուած աշխատանքի թէ՛ յաջողութիւններուն, թէ՛ ծախսողութիւններուն անդրադարձնալով կը վերանորոգենք մեր ուխտը՝ տեր կանգնելու բովանդակ հայրութեան պահանջներուն ու շահին: Այս անդրադարձաւ Դաշնակցութեան դաւանանքի չորս ուղղութիւններուն՝ ազգային, ընկերակարական, ժողովրդավարական եւ յեղափոխական, բացատրեց անոնց իրաքանչիւրը, դիտել տալով որ այս ուղղութիւններով տարուող գործունէութեան նախապատուութեան կարգը կ'որոշէ Դաշնակցութեան ընդիժողովը իր սահմանած ռազմավարութեամբ, նկատի ունենալով աշխարհաքաղաքական իրավիճակը, հայութեան ապրած երկիրներու եւ յատկապէս հայաստանամերձ շրջաններու ընդհանուր վիճակը, Հայաստանի կացութիւնը, հայ ժողովուրդի պատրաստակամութիւնը եւ ՀՀ շարքերու պարզած վիճակը: Սահմանուած ռազմավարութիւնը այս տուեալները նկատի կ'առնէ ու պարտադիր կ'ըլլայ ՀՀ-ի բոլոր շրջ-

ջաններուն համար:

Այս բանախօսը անդրադարձաւ Հայաստանի մէջ թաւշեայ յեղափոխութենէն ետք քաղաքական կեանքի մէջ արձանագրուած վերիվայրումներուն ու նկատել տուաւ:

«Հայաստանի իշխանութիւնները կը յայտարարեն, թէ կը վարեն քաղաքականութիւն մը, որ Հայաստանը պիտի վերածէ «Խաղաղութեան հասցեւորուկ»-ի: Կ'ըսեն ու կը կրկնեն, որ մեր հայրենիքը Հայաստանի Հանրապետութիւն կոչուող պետութիւնն է միայն, ո՛չ Արցախ կայ, ո՛չ Արեւմտեան Հայաստան: Հայ Դատ գոյութիւն չունի, Տեղասպանութիւնն է պատահած, Հայաստանի մէջ Արցախի պետական հիմնարկներու, իբրեւ գաղթական իշխանութիւն, գործունէութիւնը կը նկատուի վտանգաւոր Հայաստանի պետական անվտանգութեան համար: Ընդհանրապէս իշխանութիւնը պետութեան հետ ամէն քննադատութիւն կը մեր մերժուի եւ ընդդիմադիրները հալածանքի կ'ենթարկուին: Անգամ մը եւս ՀՀ Դաշնակցութիւնը կանգնած է իր սկզբունքներուն հաւատարմութեամբ գործելու դժուար ու պատասխանատու ուղիին առջեւ»:

Ապա շեշտեց, որ Դաշնակցութիւնը ստեղծուած կացութեան դիմաց ձեռնածալ չի կրնար մնալ, փորձելով մէկտեղ պահպանել Հայաստանի ներքին խաղաղութիւնը:

«Դաշնակցութիւնը ձեռնածալ

չի կրնար մնալ Հայոց պատմութիւնը ժխտող, Հայ Դատը նստեցնող երեւոյթներուն նկատմամբ: Ստեղծուած նոր ու անսխալընթաց կացութեան յանդիման, բոլոր ազգային ուժերը, անոնց կարգին Դաշնակցութիւնը կ'որոնեն կացութիւնը շրջելու ուղիներ, առանց ապակայունացնելու Հայաստանն ու թըշնամիին համար նորանոր յարձակումներու առիթներ ստեղծելու:

«Անհրաժեշտութիւն կայ ընդդիմադիր ու ազգային ուժերը միաւորելու եւ ստեղծելու ազգային փրկութեան ճակատ մը:

«Հայաստանէն Սփիւռք բոլորին ճիգերը պիտի միաւորուին ի խընդիր Հայաստանի ու Արցախի փրկութեան: ՀՀ-ն վերահաս վտանգին դիմաց վերանայման պէտք է ենթարկէ իր ռազմավարութիւնն ու ստանձնէ հայրենիքի փրկութեան գործին ղեկավարութիւնը», եզրփակեց բանախօսը:

Օրուան եզրափակիչ պատգամով Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Մակար Սրբ. Եպս. Ազգարեան շեշտեց, որ ազգին ու հայրենիքին ծանր վիճակին ի տես համախմբուած շարքերով հարկ է գործել ու ապաւինիլ մեր հաւաքական իմաստութեան՝ յանուն մեր տեսլականներու իրականացման, թէկուզ երկար ժամանակի վրայ:

Հանդիսութիւնը փակուեցաւ «Պահպանիչ» արօթքով ապա ՀՀ քայլերով:

